



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ԱՐԱՐՔՆԵՐԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ



ԵՐԵՎԱՆ
ՓԵՏՐՎԱՐ 2022



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆ
ՓԵՏՐՎԱՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. Լրագրողների պաշտպանված մասնագիտական աշխատանքը՝ որպես երկրում ժողովրդավարության կարևոր ցուցանիշ	6
Գլուխ 2. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքի սահմանափակումները և Մարդու իրավունքների պաշտպանին լրագրողների հասցեագրած ահազանգերի էությունը	11
Գլուխ 3. Կարծիքի արտահայտման ազատությունը և տեղեկություններ ստանալու իրավունքը ժողովրդավարական պետությունում լրագրողի մասնագիտական աշխատանքի համատեքստում	19
Գլուխ 4. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքի կանոնների բացակայությունը և սահմանափակումներ նախատեսելու պետության հայեցողության սահմանները.....	30
Գլուխ 5. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքն անվտանգության տեսանկյունից դիտարկելու անթույլատրելիությունը և հանրային պաշտոնյաների կարծրատիպեր առաջացնող դիրքորոշումները	36
Գլուխ 6. Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայության աշխատակիցների անթույլատրելի արարքները լրագրողների նկատմամբ և լրագրողների նկատմամբ ներգործության անիրավաչափությունն անորոշ կարգավորումների պայմաններում	43

Ներածություն

Լրագրողների մասնագիտական պաշտպանված աշխատանքը պետության ժողովրդավարության համակարգի կարևոր ցուցիչ է: Դա ուղղակիորեն կապված է երկրում խոսքի ազատության և պետության նկատմամբ քաղաքացիների վերահսկողության հետ:

Այս արտահերթ զեկույցի առիթը դարձել են Աազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքի սահմանափակումները և դրա հետ կապված՝ լրագրողների ահազանգերն ու բողոքները:

Ազգային ժողովի՝ որպես խորհրդարանական երկրի օրենսդիր մարմնի աշխատանքների թափանցիկությունն ու պատշաճ լուսաբանումն այդ մարմնի հանդեպ հանրային վստահության ապահովման, քաղաքացիների տեղեկություններ ստանալու իրավունքի կարևոր երաշխիքներից են: Լրագրողն այդ կարևոր հանրային գործառույթի կրողն է:

Օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու լրագրողի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ներկայացուցչի պարտականությունն առաջնորդվելու լրագրողի օրինավորության, նրա բարեխիղճության ու ազնվության կանխավարկածով:

Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի համար կարևոր է, որ հանրային պաշտոնյաներն իրենց վարքագծով նպաստեն լրագրողի դերի, նրա մասնագիտական աշխատանքի վերաբերյալ հանրության շրջանում ճիշտ ընկալումների ձևավորմանը, ինչպես նաև լրագրողի անխոչընդոտ գործունեության ապահովմանը: Անհրաժեշտ է բացառել հանրային պաշտոնյաների կողմից լրագրողների մասնագիտական աշխատանքի վերաբերյալ կարծրատիպեր առաջացնող, ինչպես նաև առկա կարծրատիպերը խորացնող մոտեցումների տարածումը:

Ազգային ժողովում մասնագիտական աշխատանք իրականացնող լրագրողների անխոչընդոտ աշխատանքի ապահովումն առանձնահատուկ կարևորություն ունի այն հանգամանքի հաշվառմամբ, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է առաջնային մանդատով օժտված պետական ինստիտուտի գործունեությունը լուսաբանելուն, և այդ առումով ժողովուրդն ունի տվյալ մարմնի գործունեության վերաբերյալ պատշաճ, օբյեկտիվ և թարմ տեղեկություններ ստանալու ողջամիտ ակնկալիք:

ՀՀ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում 2021 թվականի օգոստոսի 2-ից լրագրողների նկատմամբ կիրառվեցին մասնագիտական աշխատանքի սահմանափակումներ, որոնց առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել գրավոր և բանավոր բողոքներ, ահազանգեր Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներից, ինչպես նաև լրագրողական կազմակերպություններից:

Ազգային ժողովում լրագրողների նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր բողոքները, մտահոգություններն ու ահազանգերը բնույթով տարբեր են, բայց վերաբերում են այնպիսի հարցերի, որոնք առաջացնում են լրագրողական աշխատանքի խոչընդոտներ: Հենց դրանք էլ վերլուծված են սույն զեկույցում: Այլ կերպ ասած, բովանդակայինից մինչև տեխնիկական բոլոր այն սահմանափակումները, որոնք խոչընդոտում են լրագրողների աշխատանքը, դրվել են սույն զեկույցի վերլուծությունների հիմքում: Զեկույցի հիմքում դրվել են նաև հրապարակային նյութերի դիտարկման արդյունքները:

Սույն զեկույցում տեղ են գտել Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնած ուսումնասիրության արդյունքները: Իրականացվել է վերաբերելի միջազգային փորձի և չափանիշների ուսումնասիրություն: Զեկույցում կոնկրետ օրինակներով և միջազգային-իրավական կարգավորումների վրա հիմնված վերլուծությամբ հստակ ցույց են տրված օրենսդրական անհրաժեշտ կարգավորումների բացակայության, անորոշ կարգավորումների պայմաններում մարդու սահմանադրական իրավունքների համար վտանգներ պարունակող, այդ իրավունքները ոտնահարող գործնական իրավիճակներ ու մեկնաբանություններ, լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտներ:

Հարկ է նշել, որ խնդրի հետ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան: Ըստ այդմ, Բարձր դատարանին ուղղված դիմումով վիճարկվել են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի¹ 5-րդ հոդվածի 2-րդ մասի, 14-րդ հոդվածի 7-րդ մասի, 54-րդ հոդվածի 4-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 42-րդ (կարծիքի արտահայտման ազատությունը), 51-րդ (տեղեկություններ ստանալու իրավունքը), 75-րդ (հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը), 78-րդ (համաչափության սկզբունքը), 79-րդ (որոշակիության սկզբունքը) և 81-րդ (հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան) հոդվածներին:

Սույն զեկույցի հրապարակման պահի դրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի այդ դիմումի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումը չէր հրապարակվել:

¹ Այսուհետ՝ նաև Օրենք:

Գլուխ 1. Լրագրողների պաշտպանված մասնագիտական աշխատանքը՝ որպես երկրում ժողովրդավարության կարևոր ցուցանիշ

Ժողովրդավարական պետությունում լրագրողների անխոչընդոտ մասնագիտական աշխատանքի ապահովումն առանցքային նշանակություն և հանրային կարևորություն ունի: Այն հանդիսանում է հանրային մարմինների, պաշտոնյաների նկատմամբ հասարակական վերահսկողության կարևոր երաշխիքներից մեկը: Այն նաև երկրում ժողովրդավարության կարևոր ցուցանիշ է:

Լրագրողի, լրատվական գործունեություն իրականացնողի մասնագիտական աշխատանքի շնորհիվ է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ հնարավորություն է ունենում հետևելու կոնկրետ մարմնի կողմից հանրային գործառույթի իրականացմանը:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր մարմին ունի օրենսդրությամբ իրեն վերապահված՝ իրեն հատուկ գործառույթներ ու կարգավիճակ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուրն ունի լուսաբանման ու լրագրողների հետ հարաբերությունների առանձնահատկություններ: Հրապարակային աշխատանքի առումով էլ անհրաժեշտ են հատուկ պայմաններ: Նշվածը վերաբերում է նաև հանրության, այդ թվում՝ լրագրողների և հանրային մարմնի, տվյալ դեպքում՝ Ազգային ժողովի հարաբերություններին:

Ինչպես նշված է սույն զեկույցի ներածությունում, Ազգային ժողովի դեպքում դա հատկապես առանձնահատուկ է, քանի որ խոսքը վերաբերում է երկրի խորհրդարանին, այսինքն՝ մարմնի, որը ձևավորվել է ՀՀ քաղաքացիների կողմից ընտրական իրավունքի անմիջական իրացմամբ: Այս մարմինն է հատկապես խորհրդարանական կառավարման երկրում ժողովրդավարության գլխավոր երաշխավորը: Այս դեպքում, իհարկե, քաղաքացիներն առավել մեծ լեգիտիմ ակնկալիքներ ունեն ստանալու տեղեկություններ այդ մարմնի աշխատանքների վերաբերյալ:

Լրագրողների և լրատվության ոլորտի ներկայացուցիչների գործունեությունն ունի հանրային նշանակություն: Ժողովրդավարական հասարակությունում լրագրողը կարևոր

դերակատարում ունի հանրային բանավեճերին, ինչպես նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու հասարակության իրավունքի իրացմանը նպաստելու առումով:

Այս առումով պետական մարմինը, պետության ներկայացուցիչը պարտավոր է մշտապես առաջնորդվել լրագրողի օրինավորության, բարեխղճության և ազնվության կանխավարկածով:

Հատկապես պետք է այնպես անել, որ չլինեն կարծրատիպեր լրագրողների աշխատանքների վերաբերյալ. դրան հատկապես պետք է նպաստեն պետական մարմինները: Խոսքն առաջնահերթ վերաբերում է, իհարկե, խորհրդարանին, որը պետք է օրինակ ծառայի մյուս բոլոր մարմիններին, թե ինչպես պետք է վերաբերվել լրագրողներին:

Տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության սահմանադրական երաշխիքը կոչված է պաշտպանելու այդ ազատության չարդարացված սահմանափակումներից և պետության միջամտությունից²: Նշվածի սահմանադրական մակարդակում ամրագրումը, դրա բովանդակության հստակեցումը պայմանավորված են սահմանադրական մակարդակով այդ իրավունքի՝ որպես ժողովրդավարության, բաց կառավարման, հանրային իշխանության թափանցիկության և հաշվետվողականության առանցքային տարրերի կարևորության ընդգծման անհրաժեշտությամբ:

Միևնույն ժամանակ, պետական մարմնի հանրային-իրավական վարքագիծը, այդ թվում՝ քաղաքացի-պետական մարմին փոխգործակցության շրջանակներում, պետք է ունենա բավարար թափանցիկություն այն առավելագույն սահմաններում, որ չխոչընդոտի այդ մարմնի առջև դրված խնդիրների լուծմանը: Այս առումով պետական մարմնի յուրաքանչյուր որոշում և մոտեցում դրա հասցեատիրոջ, կոնկրետ դեպքում՝ լրագրողի համար պետք է լինի բավարար կանխատեսելի և որոշակի, որն էլ ենթադրում է գործնականում համապատասխան որոշման, մոտեցման իրավական և փաստական հիմնավորվածության պահանջ:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ., հասանելի է http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf հղմամբ:

Պետք է նկատի ունենալ, որ պետական մարմնի աշխատանքի նկատմամբ հանրային վստահությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն այդ մարմնի գործողությունների օրինականությամբ, այլև հասարակության առջև նրա հաշվետվողականության աստիճանով: Ուստի, նշվածից բխում է արդարացված պահանջ, որ պետական մարմնի որոշումը, գործողությունը կամ անգործությունը պետք է լինի բավարար որոշակի և համոզիչ հենց քաղաքացու ընկալման տեսանկյունից:

Կարևոր է նաև անդրադառնալ այն հարցին, որ տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման հարցը, երբ այն վերաբերում է անձնական տվյալներին, դրա շրջանակների որոշակիացման հարցում առաջ է բերում մրցակցող այլ իրավաչափ շահերի, օրինակ՝ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակության բացահայտման անհրաժեշտություն՝ այդ երկու իրավական արժեքների հավասարակշռման տեսանկյունից: Միջազգային իրավաբանությունն այդպիսի հավասարակշռության ապահովման ընդհանուր բանաձև է համարում խոսքի ազատության իրավունքի երաշխավորումն այնպիսի պայմաններում, որ չխախտի այլոց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը:

Մյուս կողմից՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը կարող է իրավաչափ լինել, եթե խոսքի ազատության իրավունքի շրջանակներում տեղեկությունների հրապարակումը պայմանավորված է հանրային գերակա շահով:

Հանրային գերակա շահն իր հերթին հնարավոր է հավաստել կոնկրետ գործի փաստական հանգամանքների համակցությամբ: Այս առումով անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների հրապարակման արդարացվածության մասին կարող են վկայել, օրինակ, համընդհանուր հետաքրքրություն ունեցող քննարկմանը նպաստելը, շահագրգիռ անձի հանրահայտ լինելն ու նրա վարքագիծը՝ տեղեկություններն անձամբ հասանելի դարձնելու առումով, հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները, հանգամանքները, որոնցում արվել են հրապարակումները և այլն:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր դեպքում, երբ խոսքի ազատության իրացումը կարող է հանգեցնել այլոց մասնավոր կյանքին միջամտության, դրա նկատմամբ հարգանքը իրավակիրառող մարմնից յուրաքանչյուր դեպքում պահանջում է գնահատել, թե արդյոք կոնկրետ գործով փաստական տվյալները վկայում են իր տնօրինած տեղեկությունների

տրամադրման հանրային շահի առկայության մասին, որը կարդարացներ դրանց հրապարակումը: Այդպիսի գնահատումն իր հերթին ենթադրում է, որ իրավակիրառող մարմինը պետք է տիրապետի էական նշանակություն ունեցող փաստերին:

Մյուս կողմից, վերոգրյալը որևէ կերպ չի նշանակում, որ յուրաքանչյուր անգամ տեղեկություններ ստանալու իր իրավունքն իրացնելիս լրագրողը պարտավոր է իրավասու մարմնին հիմնավորել դրա անհրաժեշտությունը: Այն որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես լրագրողի պարտավորություն՝ հիմնավորելու տեղեկություններ ստանալու իր իրավունքի իրավաչափությունը՝ որպես այդ իրավունքի իրացման ինքնուրույն նախապայման:

Լրագրողն ունի օրենքով սահմանված կարգով և շրջանակներում պետական մարմիններից տեղեկություններ ստանալու երաշխավորված իրավունք:

Այլ է վիճակը, երբ լրագրողի կողմից հայցվող տեղեկատվությունը վերաբերում է այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող անձնական տվյալներին: Այստեղ է, որ առաջանում է իրավական այդ երկու արժեքների հավասարակշռությունն ապահովելու խնդիր՝ հանրային գերակա շահի առկայության հավաստմամբ: Նման իրավիճակում որքան բարձր է լրագրողի հարցման փաստարկվածությունը, որն անհրաժեշտ է հանրային գերակա շահի առկայությունը հավաստելու նպատակով անձնական տվյալների հասանելիության շեղ հաղթահարելու համար, այնքան ավելի մեծ է հարցումը մերժելու դեպքում հակառակը հիմնավորելու պետական մարմնի պատասխանատվության բեռը (առանձին դեպքերում՝ նաև ծանրակշիռ փաստարկների վկայակոչմամբ):

Այս առումով հարկ է նշել, որ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունն անձի համաձայնության բացակայության պայմաններում կարող է իրավաչափ լինել, եթե այդպիսի միջամտության հիմքերն ամրագրված են օրենքով, հետապնդում են սահմանադրի կողմից կանխորոշված՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակ:

Ընդ որում, այդպիսի հիմք կարող է լինել լրագրողական գործունեության շրջանակներում հանրային հետաքրքրության կամ մտահոգության առարկա հանդիսացող տեղեկությունների հրապարակման անհրաժեշտությունը:

Այսպիսով, ցանկացած պետական գործառույթի իրականացման վերջնական հասցեատերը հասարակությունն է, որի յուրաքանչյուր անդամ համապատասխան գործառույթի վերաբերյալ սեփական պատկերացումները և գնահատականը ձևավորելու նպատակով պետք է հնարավորություն ունենա հետևելու դրա իրականացմանը:

Հասարակական նման վերահսկողությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե պետական մարմիններից յուրաքանչյուրը գործի բավարար թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների պահպանմամբ՝ իր լիազորություններին և իր առջև դրված խնդիրներին համապատասխան:

Ներկայացված կանոնների հիմքում այն հիմնարար գաղափարն է, որ պետական յուրաքանչյուր մարմնի համար օրենքին համապատասխան գործելու պահանջը պարտադիր ենթադրում է նաև այնպիսի վարքագիծ, որն այդ մարմնի աշխատանքը հանրության համար դարձնում է հասանելի և ընկալելի, հետևաբար՝ նրա հանդեպ ձևավորում հանրային վստահություն:

Գլուխ 2. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքի սահմանափակումները և Մարդու իրավունքների պաշտպանին լրագրողների հասցեագրած ահազանգերի էությունը

Պետական ցանկացած մարմին, որը նախաձեռնել է այդ մարմնի գործունեությունը լուսաբանելու հետ կապված լրագրողների իրավունքներին, նրանց մասնագիտական գործունեությանը վերաբերող սահմանափակումներ, հարցը պետք է նախապես քննարկի շահագրգիռ անձանց՝ տվյալ պարագայում լրագրողների հետ՝ վերջիններիս ապահովելով այդ կապակցությամբ լսված լինելու, իրենց կարծիքը, դիրքորոշումները, դիտարկումները ներկայացնելու իրական հնարավորությամբ:

Սա գործունեության ուղենիշ և պարտադիր պահանջ է ցանկացած ժողովրդավար պետության համար: Խոսքը հատկապես վերաբերում է այնպիսի ժողովրդավարական արժեքի, ինչպիսին է լրագրողների աշխատանքը խորհրդարանում, հետևաբար նաև խոսքի ազատությունը: Այս կերպ կընդգծվի նաև վերաբերմունքն ու հարգանքը լրագրողի աշխատանքի նկատմամբ:

Իհարկե, հարկ ենք համարում հափուկ նշել, որ լրագրողները նույնպես պետք է ղեկավարվեն պապասխանափու լրագրության սկզբունքով: Առանց պրոֆեսիոնալ լրագրողական աշխատանքի հնարավոր չէ ապահովել լրագրողների լիարժեք պաշտպանություն: Այս առումով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ինքը պարբերաբար համապապասխան քննարկումներ ու աշխատաժողովներ է կազմակերպում լրագրողների հետ փոխադրական մասնագիտական ուղղություններով (կանանց իրավունքներ, աշխատանքային իրավունքներ և այլն), որպեսզի կարողանա նպաստել լրագրողների բարձր մասնագիտական աշխատանքին:

2021 թվականի օգոստոսի 2-ից ՀՀ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում լրագրողների նկատմամբ կիրառվող մասնագիտական աշխատանքի սահմանափակումների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել գրավոր և բանավոր բողոքներ, ահազանգեր Ազգային ժողովում

հավատարմագրված լրագրողներից, ինչպես նաև լրագրողական կազմակերպություններից, այդ թվում՝ «Tert. am», «Panorama.am», «168.am», «Civilnet.am», «Factor.am», «Hraparak.am» լրատվական կայքերի, «Գործընթաց» թերթի լրագրողներից:

2021 թվականի օգոստոսի 2-ից սկսած՝ Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի օգոստոսի 5-ին, 11-ին և 25-ին հանդես է եկել համապատասխան հայտարարություններով³:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ լրագրողների նկատմամբ սահմանափակումները կիրառվում են որպես Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների մաս:

Այս առումով հարկ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածով սահմանված են Ազգային ժողովի նախագահի լիազորությունները: Նշված հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով նախատեսված է, որ *Ազգային ժողովի նախագահը հաստատում է Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները:*

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված է, որ *Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները հանձնաժողովի նիստին կարող են ներկա լինել հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, իսկ նիստի ընթացքում իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են իրենց համար առանձնացված տեղում:*

Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ *Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են Ազգային ժողովի նստավայրում առանձնացված հատուկ տեղում, իսկ նիստերի դահլիճում կարող են ներկա լինել Աշխատակազմի ղեկավարի թույլտվությամբ:*

³ <https://ombuds.am/am/site/ViewNews/1846>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1855>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1876>:

ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ին ընդունված և 2021 թվականի օգոստոսի 2-ին հրապարակված որոշմամբ⁴ մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում, որով սահմանված են ՀՀ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները:

Ուշագրավ է, որ հիմնականում հենց «Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշմամբ նախատեսված փոփոխությունների և լրացումների հիման վրա էլ Ազգային ժողովում կիրառվում են լրագրողների մասնագիտական աշխատանքի սահմանափակումները:

Պարզվել է նաև, որ մինչև դրանց ընդունումը լրագրողների կամ լրագրողական կազմակերպությունների, ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ քննարկումներ տեղի չեն ունեցել: Նշվածը խնդրահարույց է հաշվի առնելով այն, որ սահմանափակումները վերաբերում են հենց լրագրողներին, լրագրողական գործունեությանը, հետևաբար անընդունելի է անմիջականորեն լրագրողներին, նրանց առօրյա մասնագիտական գործունեությանը վերաբերող կարգավորումներ նախատեսելը՝ առանց վերջիններիս դրանց բնույթի, նպատակի մասին պատշաճ իրազեկելու, ինչպես նաև այդ կապակցությամբ նրանց կարծիքը և դիտարկումները հաշվի առնելու: Ավելին, անհրաժեշտ էր նաև քննարկումներ իրականացնել մասնագիտական հասարակական կազմակերպությունների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի և Ազգային ժողովի նախագահի, ինչպես նաև երկու հաստատությունների աշխատակազմերի միջև տեղի են ունեցել քննարկումներ, սակայն խնդիրը լուծում չի ստացել:

Լրագրողների նկատմամբ սահմանափակումներին վերաբերող հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը քննարկել է Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների, լրագրողական մի շարք կազմակերպությունների հետ:

⁴ Այսուհետ՝ նաև Որոշում:

« Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում հավատարմագրված լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների հետևանքով մարդու սահմանադրական իրավունքների իրացման հետ կապված խնդիրներ են վեր հանվել ինչպես հրապարակային նյութերի դիտարկման արդյունքում, այնպես էլ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների և ահազանգերի բովանդակությունը հանգում է հետևյալին.

1. Ազգային ժողովի հատուկ վերահսկելի գոտում արգելվում է հավատարմագրված լրագրողներին զբաղվել մասնագիտական գործունեությամբ, սակայն իրավական մակարդակում հստակ ամրագրված չէ, առկա չեն չափանիշներ, թե Ազգային ժողովի որ հատվածներն են ներառված կամ կարող են ներառվել «հատուկ վերահսկելի գոտի» հասկացության ներքո: Խոսքն, օրինակ, այն մասին է, թե Որոշմամբ սահմանված՝ Ազգային ժողովի նիստերի դահլիճից, Ազգային ժողովի նախագահի աշխատասենյակից և Ազգային ժողովի նախագահի ընդունարանից բացի որ հատվածները կարող են Ազգային ժողովի նախագահի որոշմամբ ներառվել «հատուկ վերահսկելի գոտի» հասկացության ներքո:

2. Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցները չեն թույլատրում հավատարմագրված լրագրողներին մուտք գործել Ազգային ժողովի նոր մասնաշենք, ինչպես նաև մոտենալ խմբակցությունների և պատգամավորների աշխատասենյակներին, հարցազրույցներ և մեկնաբանություններ վերցնել Ազգային ժողովի միջանցքներում, ինչպես նաև դրանց նախասրահներից:

3. Անվտանգության ծառայության աշխատակիցները խոչընդոտում են Ազգային ժողովի միջանցքներում պատգամավորներին մոտեցած լրագրողների մասնագիտական գործունեությունն, այդ թվում՝ չեն թույլատրում լրագրողին մուտք գործել պատգամավորի աշխատասենյակ, լրագրողների վկայությամբ, անգամ այն դեպքում, երբ պատգամավորն անձամբ հրավիրում է լրագրողին իր աշխատասենյակ:

4. Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցներն արգելում են տեսանկարահանում և լուսանկարահանում իրականացնել

այն վայրերում, որտեղ իրենք են գտնվում կամ ծառայություն իրականացնում: Ընդ որում, լրագրողներին չի ներկայացվում որևէ պատճառաբանություն, այլ պարզապես հղում է արվում նրա վրա, որ կա արգելք: Այդ պահանջը չպահպանելու դեպքում կարող է արգելվել հավատարմագրված լրագրողների մուտքն Ազգային ժողով և այնտեղ նրանց կողմից մասնագիտական գործունեության իրականացումը:

5. Ազգային ժողովի նիստերի դահլիճի օթյակ լրագրողների մուտք գործելու և նրանց այնտեղ գտնվելու կապակցությամբ անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ցուցաբերվում է կամայական մոտեցում, լրագրողների մուտքը նիստերի դահլիճի օթյակ երբեմն խոչընդոտվում է անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից՝ առանց պատճառաբանության:

6. Ազգային ժողովի նիստերի դահլիճում լարված մթնոլորտ կամ վիճաբանություն առաջանալու դեպքում անվտանգության ծառայության աշխատակիցներն անմիջապես մուտք են գործում նիստերի դահլիճի օթյակ և այնտեղից կոպիտ կերպով, քաշքշելով, բռնություն գործադրելով հեռացնում մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողներին՝ առանց պատճառաբանությունների: Ավելին, այդ ընթացքում լրագրողներին արգելվում է լուսանկարահանել և (կամ) տեսանկարահանել անվտանգության ծառայության աշխատակիցներին, ինչպես նաև այն, ինչ տվյալ պահին տեղի է ունենում Ազգային ժողովի նիստերի դահլիճում:

7. Առանձին պատգամավորներ հրաժարվում են հարցազրույցներ տալ կամ մեկնաբանություններ անել՝ թույլ տալով լրագրողին ուղղված ցուցադրական վիրավորական ձևակերպումներ, հատկապես՝ երբ հստակ տեղյակ են, թե լրագրողը որ լրատվամիջոցն է ներկայացնում:

8. Մի շարք հավատարմագրված լրագրողների պնդմամբ՝ լրագրողի և պատգամավորի խոսակցության ընթացքում լարված մթնոլորտ առաջանալու պարագայում լինում են դեպքեր, երբ անվտանգության ծառայության աշխատակիցներն անմիջապես մոտենում են նրանց և կանգնում լրագրողի ու պատգամավորի միջև՝ դրանով ևս խոչընդոտելով լրագրողի մասնագիտական աշխատանքի պատշաճ իրականացմանը:

9. Սահմանափակումների կիրառումն ապահովելու նպատակով ներգրավված են ռազմականացված, զինվորական համազգեստ կրող ծառայողներ, որոնք արգելքներ կիրառելիս որևէ պատճառաբանություն չեն ներկայացնում լրագրողներին, այդ թվում՝ այն մասին, թե ի՞նչ հիմքով են խոչընդոտում նրանց մասնագիտական աշխատանքը:

10. Անվտանգության ծառայության աշխատակիցները հաճախ կոպիտ վերաբերմունք են ցուցաբերում լրագրողների նկատմամբ, այդ թվում՝ քաշքշում են նրանց, ձեռքից վերցնում են նրանց բջջային հեռախոսները, ներկայացնում են Ազգային ժողովի տարբեր հատվածներ չնկարահանելու պահանջներ, պահանջում են ջնջել նկարահանածը և այլն: Լրագրողներից մեկի պնդմամբ՝ անգամ եղել է դեպք, երբ անվտանգության ծառայության աշխատակցի պահանջով ստիպված է եղել ջնջել իր ողջ լրագրողական նյութը, ինչ է, թե դրանում մի փոքր կադրով երևում է անվտանգության ծառայության աշխատակիցը:

11. Անվտանգության ծառայության աշխատակիցները պահանջում են լրագրողներից ջնջել նկարահանված նյութերը՝ հակառակ պարագայում սպառնալով, որ տվյալ լրագրողները կգրկվեն հավատարմագրումից:

12. Չնայած Ազգային ժողովում աշխատում են սահմանված ընթացակարգով հավատարմագրված լրագրողներ, որոնք Ազգային ժողով մուտք գործելիս ենթարկվում են ստուգման Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայության կողմից, այդ թվում՝ համապատասխան սարքերով, նրանց գործունեությանը վերաբերող սահմանափակումները, միևնույն է, որակվում են որպես Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների բաղկացուցիչ մաս և ներառված են այդ կանոնների ներքո: Ընդ որում, նման անթույլատրելի մեկնաբանությանն ավելացել են տարբեր պաշտոնյաների առավել անթույլատրելի պաշտոնական հայտարարություններ, որոնցով համեմատություններ են արվում անգամ առավելագույն ծանրության հանցանքների ու հանցանք կատարած անձանց հետ: Խոսքն, օրինակ, վերաբերում է այնպիսի պաշտոնյաների, ինչպիսիք են Արդարադատության նախարարը, Ազգային ժողովի կառավարող խմբակցության պատգամավորներ և այլն: Ինքնին սա էլ վտանգավոր է հանրության մեջ լրագրողների ու, առհասարակ,

լրատվական գործունեության վերաբերյալ սխալ ընկալումների ձևավորման տեսանկյունից:

13. Ազգային ժողովում իրենց աշխատանքի վերաբերյալ բարձրաստիճան պաշտոնյաների, ԱԺ-ի անվտանգության ապահովման ծառայության աշխատակիցների վերաբերմունքի պատճառով այլ մարմիններում ևս վերաբերմունքը դեպի բացասականը փոխվել է:

14. Նշված պահվածքի, վերաբերմունքի պատճառով դեպի բացասական է փոխվել է նաև հանրության վերաբերմունքն իրենց նկատմամբ: Լինում են դեպքեր, երբ մարդիկ նույնպես պատգամավորի կամ նախարարի կամ այլ պաշտոնյայի հանրային բառապաշարն են օգտագործում՝ վիրավելով լրագրողին կամ հրաժարվելով, օրինակ, հարցի պատասխանել:

Պաշտպանին հասցեագրված տեխնիկական բնույթի բողոքներ և ահազանգեր, որոնց բացասական են ազդում լրագրողների աշխատանքի վրա՝

1. Ազգային ժողովի նիստերի դահլիճի անմիջական հարևանությամբ լրագրողների համար նախատեսված հատվածում տեղադրված աթոռներին հիմնականում նստում են անվտանգության 9 աշխատակիցներ, որի հետևանքով ազատ է մնում միայն մի քանի աթոռ և լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս հաճախ չեն ունենում նստելու հնարավորություն:

2. Ազգային ժողովի նիստերի դահլիճի անմիջական հարևանությամբ լրագրողների համար նախատեսված վերոնշյալ հատվածում առկա է միայն մի քանի վարդակ, որոնցից հիմնականում օգտվում են անվտանգության ծառայության աշխատակիցները՝ իրենց բջջային հեռախոսների մարտկոցները լիցքավորելու նպատակով: Նշվածի հետևանքով լրագրողները հաճախ չեն կարողանում լիցքավորել իրենց համակարգիչների մարտկոցները:

3. Լրագրողների համար նախատեսված վերոնշյալ հատվածում մեծ թվով անվտանգության ծառայության աշխատակիցների մշտական ներկայության պատճառով խնդիրներ են առաջանում նաև լրագրողների մասնագիտական գործունեության գաղտնիությունն ապահովելու տեսանկյունից, քանի որ անվտանգության ծառայության

աշխատակիցները, տվյալ տարածքի փոքր լինելու պատճառով, կարողանում են հետևել լրագրողների գործունեությանը, նրանց աշխատանքին, այդ թվում՝ նրան, թե ի՞նչ տեղեկություններ և նյութեր ունեն լրագրողներն իրենց համակարգիչներում: Խոսքն, իհարկե, առաջին հերթին վերաբերում է մասնագիտական խորհրդապահություն պարունակող նյութերին:

Այսպիսով, բարձրացված հարցերի դիտարկման արդյունքները վեր են հանել խնդրի համակարգային բնույթը, ինչպես նաև այն սահմանադրականության հարթությունում դիտարկելու անհրաժեշտությունը:

Գլուխ 3. Կարծիքի արտահայտման ազատությունը և տեղեկություններ ստանալու իրավունքը ժողովրդավարական պետությունում լրագրողի մասնագիտական աշխատանքի համատեքստում

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի⁵ 10-րդ հոդվածը երաշխավորում է ազատորեն արտահայտվելու իրավունքը: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և փարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:*

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պարասխանավորության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, փարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկավորության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի էությանը, նշել է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է

⁵ Այսուհետ՝ Կոնվենցիա:

ժողովրդավարական հասարակության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկը⁶:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով ազատորեն արտահայտվելու իրավունքի նկատմամբ միջամտության հարցին, արձանագրել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի համատեքստում նման միջամտությունը պետք է «նախատեսված լինի օրենքով», ունենա մեկ կամ մի քանի օրինական նպատակ և «անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում⁷»:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆում ամրագրված՝ «օրենքով նախատեսված» արտահայտությունը ոչ միայն պահանջում է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը ներպետական օրենսդրությամբ ունենա իրավական հիմք, այլ նաև վերաբերում է տվյալ օրենքի որակին, որը պետք է հասանելի լինի շահագրգիռ անձի համար և կանխատեսելի՝ դրա հետևանքների առումով⁸:

Հայեցողություն նախատեսող օրենքն ինքնին չի հակասում կանխատեսելիության պահանջին, պայմանով, որ հայեցողության շրջանակը և դրա կիրառման եղանակը նշված են բավարար հստակությամբ՝ հաշվի առնելով միջամտության օրինական նպատակը, անհատին կամայական միջամտությունից պատշաճ պաշտպանություն տրամադրելու նպատակով⁹:

⁶ Տե՛ս Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. The United Kingdom) գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 5493/72, կետ 49: Ստոլլն Շվեյցարիայի (Stoll v. Switzerland) գործով 2007 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 69698/01, կետ 101: Մորիսն Ֆրանսիայի (Morice v. France) գործով 2015 թվականի ապրիլի 23-ի վճիռը, գանգատ թիվ 29369/10, կետ 124:

⁷ Տե՛ս Մանդլին և այլոք ընդդեմ Հունգարիայի (Mándli and others v. Hungary) գործով 2020 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 63164/16, կետ 46:

⁸ Տե՛ս Մանդլին և այլոք ընդդեմ Հունգարիայի (Mándli and others v. Hungary) գործով 2020 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 63164/16, կետ 48:

⁹ Տե՛ս Մանդլին և այլոք ընդդեմ Հունգարիայի (Mándli and others v. Hungary) գործով 2020 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 63164/16, կետ 49:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարևորել է այն հարցի դիտարկումը, թե արդյոք ազատորեն արտահայտվելու իրավունքի սահմանափակումն ուղեկցվել է չարաշահման բացառման արդյունավետ և համարժեք երաշխիքներով¹⁰:

ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի¹¹ 19-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին*:

Դաշնագրի նույն հոդվածի 2-րդ մասը երաշխավորում է, որ *յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը*:

Խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից է, դրա զարգացման, անձի ինքնաբավարարման հիմնական պայմաններից մեկը¹²:

Մամուլը կարևոր դեր ունի քաղաքական և հանրային հետաքրքրության այլ հարցերով տեղեկություններ և գաղափարներ տարածելու մեջ, իհարկե եթե այն չի խախտում Կոնվենցիայով նախատեսված թույլատրելի սահմանները¹³:

Մամուլը ոչ միայն ունի տեղեկատվություն և գաղափարներ տարածելու խնդիր, այլ նաև հասարակությունն ունի դրանք ստանալու իրավունք¹⁴:

¹⁰ Տե՛ս Մանդլին և այլոք ընդդեմ Հունգարիայի (Mándli and others v. Hungary) գործով 2020 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 63164/16, կետ 71:

¹¹ Այսուհետ՝ Դաշնագիր:

¹² Տե՛ս Standard Verlags GmbH-ն ընդդեմ Ավստրիայի գործով 2009 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 21277/05, կետ 44: Éditions Plon-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով 2004 թվականի օգոստոսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 58148/00, կետ 42:

¹³ Տե՛ս Կաստելլան ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի գործով վճիռը, գանգատ թիվ 11798/85, կետ 43:

¹⁴ Տե՛ս Բլադետ Տրոմսոն և Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromso and Stensaas v. Norway) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21980/93, կետ 62: Տորգեիր Տորգեիրսոնն ընդդեմ Իսլանդիայի (Thorgeir Thorgeirson v. Iceland) գործով վճիռը, գանգատ թիվ 13778/88, կետ 63:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2020 թվականի 2317 բանաձևով¹⁵ արձանագրվել է, որ առանց խոսքի ազատության իրավունքի և ազատ, անկախ ու բազմակարծիք լրատվամիջոցների չկա իրական ժողովրդավարություն:

Այս առումով Եվրոպայի խորհուրդը և նրա Խորհրդարանական վեհաժողովը կարևորել են լրատվամիջոցների ազատության երաշխավորումը բոլոր առումներով, ներառյալ՝ տեղեկատվության հասանելիության իրավունքի, աղբյուրների պաշտպանության, աշխատավայրում և մասնավոր բնակավայրում խուզարկություններից, ինչպես նաև նյութերի առգրավումից պաշտպանված լինելու, խմբագրական անկախության և հասարակական բանավեճերին հետաքննելու, քննադատելու և դրանց նպաստելու ունակության երաշխավորումը՝ առանց ճնշման կամ միջամտության վախի: Լրագրողների և լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգությունն այս ազատության հիմնարար բաղադրիչն է:

Բանաձևով նաև արձանագրվել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում՝ անդամ պետությունները լրագրողների և լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգ գործունեության համար պատշաճ իրավական հիմք ստեղծելու դրական պարտավորություն ունեն: Այնուամենայնիվ, սպառնալիքները, հետապնդումները, իրավական և վարչական սահմանափակումները, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական անհարկի ճնշումները լայն տարածում ունեն:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովն անդամ պետություններին կոչ է արել ստեղծել բարենպաստ լրատվական միջավայր և այդ նպատակով վերանայել ներպետական օրենսդրությունը՝ նպատակ ունենալով կանխել լրատվամիջոցների ազատության վրա ազդեցություն ունենալու հնարավորություն ընձեռող տարբեր օրենքների կամ դրույթների չարաշահումը, ինչպիսիք են՝ զրպարտությանը, ահաբեկչության դեմ պայքարին, ազգային անվտանգությանը, հասարակական կարգին, ատելության խոսքին, հայհոյանքին վերաբերող օրենքները,

¹⁵ Այսուհետ՝ Բանաձև:

որոնք չափազանց հաճախ կիրառվում են լրագրողներին ահաբեկելու և լռեցնելու նպատակով¹⁶:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականը¹⁷ սահմանում է, որ խոսքի ազատության համար բարենպաստ միջավայրը պետք է ունենա մի շարք առանցքային հատկանիշներ, որոնք համակցության մեջ խոսքի և տեղեկատվության ազատության և ակտիվ հանրային բանավեճերի զարգացման պայմաններ կստեղծեն: **Տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Հասարակությունն ունի հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունք, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու: Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մասը:**

Լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:

Այդպիսով, խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: **Լրագրողների ու մամուլի մասնակիցների այդ իրավունքին ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին:**

¹⁶ <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=28508&lang=en>

¹⁷ Այսուհետ՝ Հանձնարարական:

Հանձնարարականի «Սկզբունքներ» բաժնի 2-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված **խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմքերից է, դրա առաջընթացի և յուրաքանչյուր անհատի զարգացման պայմաններից մեկը: Խոսքի ազատությունը կիրառելի է ոչ միայն ընդունելի, անվնաս կամ չեզոք տեղեկությունների կամ գաղափարների, այլև այնպիսի տեղեկությունների նկատմամբ, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են պետությանը կամ հասարակության որոշակի խմբին:**

Հանձնարարականի՝ հանրային բանավեճին նպաստելու սկզբունքն ամրագրող 30-րդ կետի համաձայն՝ ժողովրդավարական հասարակությունում լրագրողների և լրատվական ոլորտի այլ ներկայացուցիչների անխոչընդոտ գործունեությունն ապահովելու տեսանկյունից **Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերջիններիս խոսքի ազատությունը պետք է լայնորեն պաշտպանված լինի: Այսպիսի պաշտպանությունը պետք է ընդգրկի նրանց գործունեության հետ գործառույթային կապ ունեցող երաշխիքներ, որոնց թվում առանձնացված են տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը, լուրերի ու տեղեկությունների հավաքման գործընթացի պաշտպանվածությունը, խմբագրման ու ներկայացման ինքնավարությունը և այլն: Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ լրագրողի գործառնական կամ գործառույթային ազատությունները, որոնք ներառում են լուրերը, տեղեկությունների հավաքումը, մշակումն ու տարածումը, անհրաժեշտ են լրագրողի խոսքի ազատությունը գործնական և արդյունավետ դարձնելու համար:**

Հատկանշական է, որ Հանձնարարականի «Կանխարգելում» բաժնի 3-րդ կետով ամրագրված է, որ այս օրենսդրական դաշտը պետք է ենթակա լինի անկախ և բովանդակային վերանայման՝ երաշխավորելու, որ **կարծիքի ազատ արտահայտման իրավունքի ապահովման երաշխիքները գործնականում ուժեղ և արդյունավետ են, և օրենսդրությունն ապահովված է կիրարկման արդյունավետ գործիքակազմով:**

Վերանայումները պետք է ընդգրկեն գործող օրենքները և օրենսդրական նախագծերը, ներառյալ՝ ահաբեկչությանը, ծայրահեղականությանը և պետության անվտանգությանը

վերաբերող, ինչպես նաև ցանկացած այլ օրենսդրություն, որն ազդում է լրագրողների կամ այլ լրատվական գործունեություն իրականացնողների կարծիքի արտահայտման ազատության և ցանկացած այլ իրավունքների վրա, որոնք էական են կարծիքի ազատ արտահայտման իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից¹⁸:

Լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով:

Միևնույն ժամանակ, կարծիքի ազատ արտահայտման իրավունքն, իհարկե, անսահմանափակ չէ, այն կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Նշվածը հստակ ամրագրված է մեր երկրի Սահմանադրությամբ:

Արտահայտվելու ազատությունը ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի¹⁹:

Ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ խնդրո առարկա իրավունքին միջամտությունը պետք է նախատեսված լինի օրենքով, այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ: Մասնավորապես՝ միջամտության նպատակը պետք է լինի այլոց իրավունքների պաշտպանությունը և հանցագործությունների կանխումը, և տվյալ միջամտությունն անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում²⁰:

¹⁸ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016806415d9#_ftn1

¹⁹ Տե՛ս Տորգեիր Տորգեիրսոնն ընդդեմ Իսլանդիայի (Thorgeir Thorgeirson v. Iceland) գործով վճիռը, գանգատ թիվ 13778/88, կետ 63:

²⁰ Տե՛ս Ռոեմենը և Շմիտն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Roemen and Schmit v. Luxembourg) գործով 2003 թվականի մայիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 51772/99, կետեր 48, 51: Գուովինն ընդդեմ Միացյալ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ դատարանները պետք է գնահատեն, թե **արդյոք խոսքի ազատության սահմանափակումը ելնում է «իրատապ հասարակական կարիքից»**, **արդյոք այն համաչափ է իր առջև դրված «իրավաչափ նպատակին»**, և **արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «պատշաճ են և բավարար»²¹**:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանմանը, բազմիցս նշել է, որ իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը որոշելու հարցում մասնակից պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմանով, որը, սակայն, ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ, իսկ վերջինիս սահմանները կախված են գործի բնույթից: Բոլոր այն դեպքերում, երբ արձանագրվում է միջամտություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով երաշխավորված ազատություններին և իրավունքներին, եվրոպական կառույցները պետք է խիստ վերահսկողություն սահմանեն, ինչը պայմանավորված է այդ իրավունքների կարևորությամբ²²:

ՀՀ Սահմանադրության 42-րդ՝ «Կարծիքի արտահայտման ազատությունը» վերտառությամբ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք*:

Վերոնշյալ սահմանադրական դրույթի համաձայն՝ *այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը*:

Թագավորության (Goodwin v. The United Kingdom) գործով 1996 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 17488/90, կետ 40:

²¹ Տե՛ս Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի (Grinberg v. Russia) գործով 2005 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 23472/03, կետ 27:

²² Տե՛ս «Աուտրոնիկ» ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի (Autronic AG v. Switzerland) գործով 1990 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 12726/87, կետ 61:

Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է *յուրաքանչյուրի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը*: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով*:

Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքներ են սահմանված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ *լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա*: Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով **սահմանված է գրաքննության, լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքի, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու արգելք**:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *հավատարմագրման կարգում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չունեն այնպիսի դրույթները, որոնք՝ 1) կսահմանափակեն հավատարմագրված լրագրողի իրավունքը՝ մասնակցելու տվյալ մարմնի, դրա ստորաբաժանումների նիստերին, այլ միջոցառումներին, բացառությամբ դրանց դոնփակ լինելու դեպքերի. 2) կբացառեն տվյալ մարմնում անցկացվող միջոցառումների մասին լրագրողների՝ ողջամիտ ժամկետում տեղեկացված լինելը. 3) անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար. 4) կսահմանափակեն լրագրողի՝ տեղեկատվություն ձեռք բերելու օրենքով սահմանված իրավունքները*:

Բացի այդ, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված է, որ **որևէ մարմնում հավաքարմագրված բոլոր լրագրողների համար աշխատանքի պայմանները պետք է լինեն նրանց աշխատանքին նպաստող և ոչ խտրական՝ ողջամտության սահմաններում:**

Խոսքի (կարծիքի արտահայտման) ազատության իրավունքն ունի անձնական և սոցիալական նշանակություն:

Խոսքի ազատությունն անձնական (անհատական) նշանակություն ունի, քանի որ յուրաքանչյուրն իրավունք ունի ազատորեն, առանց կաշկանդվելու արտահայտել իր կարծիքը, գաղափարները, համոզմունքները՝ առանց հետապնդվելու մտավախության:

Սոցիալական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության զարգացման և կայացման հարցում անփոխարինելի գործիք է: **Խոսքի ազատության բացակայությունը նշանակում է բազմակարծության, հետևաբար՝ ժողովրդավարության բացակայություն:**

Խոսքի ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը որոշակիորեն բացահայտվել է Սահմանադրական դատարանի 2012 թվականի մարտի 6-ի թիվ ՍԴՈ-1010 որոշմամբ, որի համաձայն՝ **խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը: Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:**

Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ **իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի**

իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար:

Խնդրի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև Վճռաբեկ դատարանը՝ 2012 թվականի ապրիլի 27-ի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ արձանագրելով, որ «անհրաժեշտ» **հասկացությունը նշանակում է, որ սահմանափակումն առաջացել է հասարակական կամ սոցիալական կարիքներից, և առկա է ճնշող հասարակական կարծիք այդ հարցում**²³:

Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց համարվելու համար միջամտությունը պետք է «բավականաչափ» հիմնավորված լինի, ինչը պարզելու համար հարկավոր է հաշվի առնել տվյալ գործով հանրությանը հուզող յուրաքանչյուր հայեցակետ²⁴:

Լրագրողների մասնագիտական անխոչընդոտ աշխատանքը պետք է առավել երաշխավորված լինի հենց խորհրդարանում, որը երկրում ժողովրդավարության գլխավոր երաշխավորն է:

²³ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905401177

²⁴ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday Times v. The United Kingdom) գործով 1979 ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 65:

Գլուխ 4. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքի կանոնների բացակայությունը և սահմանափակումներ նախատեսելու պետության հայեցողության սահմանները

Լրագրողների գործունեությանն առնչվող սահմանափակումներ նախատեսելիս դրանք պետք է հիմնված լինեն կոնկրետ պահանջների վրա, ինչպես նաև բավարար և անհրաժեշտ լինեն կոնկրետ նպատակների հասնելու համար:

Նշվածն առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել կարծիքի արտահայտման ազատությանը, տեղեկություններ ստանալու իրավունքին և, առհասարակ, խոսքի ազատությանն առնչվող կարգավորումների առանձնահատկությունների հաշվառմամբ: Ըստ այդմ, **իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող թողնվել պետության բացարձակ հայեցողությանը, այլ պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությամբ կանխորոշված շրջանակներին ու պայմաններին:**

Մասնավորապես, Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված է, որ *հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:*

Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված է համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված է որոշակիության սկզբունքը, որի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար*

չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածով սահմանված է, որ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Այսպիսով, իրավունքների կամ ազատությունների սահմանափակումներ, դրանցից շեղումներ հնարավոր են միայն օրենքով և կոնկրետ իրավաչափ նպատակների համար: Ընդ որում, սահմանափակումներ նախատեսող օրենքը պետք է ունենա առավելագույն հստակություն և բացառի դրա կիրառության ընթացքում կամայական մեկնաբանության կամ անորոշ ընկալման տեղիք տվող դրույթներ:

Նշվածը կարևոր է մարդու, քաղաքացու համար, որպեսզի վերջինս կարողանա հստակ պատկերացնել իր իրավունքները և պետության արարքները, իր պատասխանատվության ու պարտականությունների շրջանակը: Իրավական կանոնների հստակությունն ի վերջո նպաստում է երկրում լարվածության բացառմանը և պետության մեխանիզմների անսասան աշխատանքին:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ **Կոնվենցիայով սահմանված իրավունքներից և ազատություններից շեղումներն առկա և նմանատիպ իրավիճակներում կարող են համարվել թույլատրելի, եթե դրանք խստորեն անհրաժեշտ են և բխում են իրավիճակից, ինչպես նաև չեն հանգեցնում իրավունքի կամ իշխանության չարաշահման:** Կարևոր է նաև, որպեսզի բոլոր սահմանափակումներն ունենան իրավական հիմք և համապատասխանեն վերաբերելի սահմանադրական երաշխիքներին ու պահանջներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ ժողովրդավարության հիմնական բնութագրիչներից մեկը հանրային քննարկման

միջոցով խնդիրները լուծելու հնարավորությունն է՝ ընդգծելով, որ ժողովրդավարությունը բարգավաճում է խոսքի ազատության վրա²⁵:

Պետության հայտարարած իրավաչափ նպատակին հասնելու համար գործադրվող սահմանափակումները պետք է կիրառվեն հնարավորինս նվազագույն չափով (*less restrictive*), իսկ պետության կողմից ձեռնարկված միջոցառումները պետք է լինեն վերջին միջոց (*last resort*), առանց որի հնարավոր չէ վերահսկել իրավիճակը: Պարտադիր է նաև հստակ և կանխատեսելի իրավական հիմքի առկայությունը²⁶:

Սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում, լինեն համաչափ հետապնդվող նպատակին և կրեն ժամանակավոր բնույթ²⁷: Պետությունը պետք է հավաստի այս բոլոր պայմանների միաժամանակյա առկայությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր գործողության հետևանքները²⁸:

«Սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկան ևս բացահայտել է իրավական որոշակիության սկզբունքի իրավական բովանդակությունը՝ մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման միջազգային մոտեցումներին համահունչ: Այսպես, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝

²⁵ Տե՛ս Մեհմեդ Հասան Ալթանն ընդդեմ Թուրքիայի (*Mehmet Hasan Altan v Turkey*) գործով 2018 թվականի մարտի 20, գանգատ թիվ 13237/17, կետ 210:

²⁶ Տե՛ս Էնհորն ընդդեմ Շվեդիայի (*Enhorn v. Sweden*) գործով 2005 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 56529/00 կետ 44:

²⁷ Տե՛ս Կուիմովն ընդդեմ Ռուսաստանի (*Kuimov v. Russia*) գործով 2009 թվականի հունվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 32147/04, կետ 92, 96:

²⁸ Տե՛ս Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (*Busuioc v. Moldova*) գործով 2005 թվականի մարտի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00, կետ 52: Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի (*Rekvenyi v. Hungary*) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 34: Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Sunday Times v. The United Kingdom*) գործով 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

- Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ **իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում**²⁹:

- Իրավական որոշակիության սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան **հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները** և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում³⁰:

- Իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ **իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ**³¹:

- Իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող **հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության**³²:

Մինչդեռ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված՝ «**իրենց համար առանձնացված տեղում**», ինչպես նաև 54-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ «**առանձնացված հատուկ տեղում**» ձևակերպումները՝ որպես լրագրողների իրավունքների սահմանափակման հիմք, գնահատողական են և խնդրահարույց իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից:

Առկա չեն չափանիշներ, որոնք հնարավորություն կտան իրավակիրառողին պատշաճ մեկնաբանել «**իրենց համար առանձնացված տեղում**» և «**առանձնացված հատուկ տեղում**» ձևակերպումները: Նշվածը իրավակիրառողներին լրագրողների իրավունքները

²⁹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշումը:

³⁰ Տե՛ս Սահմանադրական դատարանի ՍԴՈ-630, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1289 որոշումները և այլն:

³¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշումը:

³² Տե՛ս Սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-1176 որոշումը:

սահմանափակելու տեսանկյունից լայն հայեցողություն է տալիս, որը կարող է հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության, տեղեկություններ ստանալու իրավունքի անհիմն սահմանափակման:

Ավելին, խնդրահարույց է, որ Ազգային ժողովում լրագրողների գործունեությանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ սահմանափակումները, չեն ստացել որոշակի և հստակ, կանխատեսելի ամրագրումներ օրենսդրական մակարդակում, այլ ներառվել են որպես Ազգային ժողովի նախագահի կողմից հաստատվող՝ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների բաղկացուցիչ մաս:

Մասնավորապես, 2021 թվականի հուլիսի 30-ին ընդունված և 2021 թվականի օգոստոսի 2-ին հրապարակված՝ «Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշումը կայացվել է ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով, որի համաձայն՝ *Ազգային ժողովի նախագահը հաստատում է Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները:*

Հենց վերոնշյալ ներքին (լոկալ) իրավական ակտով են նախատեսվել Ազգային ժողովում լրագրողների գործունեությանը վերաբերող այն կարգավորումները, որոնց հիման վրա հիմնականում կիրառվում են լրագրողների իրավունքների խնդրահարույց սահմանափակումները, որն անընդունելի է:

Նշվածը պայմանավորված է նաև նրանով, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, որով սահմանված են Ազգային ժողովի նախագահի լիազորությունները, վերջինիս վերապահված չէ որևէ լիազորություն՝ կապված Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, լրագրողների վարքագծի կանոնները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ պատգամավորների ու այլ պաշտոնատար անձանց պարտականությունները սահմանելու հետ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում Ազգային ժողովի նախագահի լիազորությունները սահմանող դրույթում նման լիազորության բացակայությունն է հենց հիմք հանդիսացել, որ Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական գործունեությանն առնչվող կարգավորումները, այդ թվում՝ սահմանափակումները, դիտարկվել և ներառվել են Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների ներքո:

Գլուխ 5. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքն անվտանգության տեսանկյունից դիտարկելու անթույլատրելիությունը և հանրային պաշտոնյաների կարծրատիպեր առաջացնող դիրքորոշումները

Ազգային ժողովում մասնագիտական աշխատանք են կատարում լրագրողներ, որոնք սահմանված ընթացակարգով հավատարմագրված են հենց նույն Ազգային ժողովի կողմից: Այսինքն՝ մինչև Ազգային ժողովում աշխատանքն այդ լրագրողները՝ նախապես հատուկ ընթացակարգ անցնելով, ստացել են Ազգային ժողովում աշխատելու իրավունք: Նրանց գործունեությանը վերաբերող կարգավորումները չեն կարող դիտարկվել Ազգային ժողովի նստավայրի տարածքի և շենքի անվտանգության ապահովման տեսանկյունից: Հետևաբար, այդ կարգավորումները չեն կարող դիտարկվել որպես անվտանգության կանոնների բաղկացուցիչ մաս և ներառվել այդ կանոնների ներքո:

Նման մեկնաբանությունը չի բխում լրագրողի մասնագիտական աշխատանքի էությունից և կարող է առաջացնել լրացուցիչ խոչընդոտներ: Մասնավորապես, նման մոտեցումները կարող են խորացնել լրագրողների նկատմամբ կարծրատիպերը և լրագրողներին դիտարկել որպես մարդկանց, ում աշխատանքը կապված է անվտանգության հետ:

Պետության, առհասարակ, և հանրային պաշտոնյաների՝ մասնավորապես, դերն էլ պետք է լինի այն, որ լրագրողների աշխատանքն առավել խրախուսվի և երբևէ թույլ չտրվի կարծրատիպային մոտեցում:

Այս առումով ուշադրության են արժանի, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարի հետևյալ մեկնաբանություններն Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների վերաբերյալ լրագրողների հարցադրումներին ի պատասխան՝ *«Ինչ վերաբերում է էսօրվա Ձեր հարցադրմանը՝ այդ սահմանափակումները... անվտանգության դեպքում՝ ազգային անվտանգության, պետական անվտանգության դեպքում, աշխարհի բոլոր ամենաքաղաքակիրթ երկրներում*

լինում են սահմանափակումներ: Եվ նաև հիշեցնելով, թե ով էր, օրինակ, Նաիրի Հունանյանը՝ լինելով լրագրող՝ կարող էր ինչեր անել, մենք պետք է հասկանանք, որ լրագրությունը կամ խոսքի ազատությունը բացարձակ արժեք չէ, և եթե անվտանգության մարմինները գտել են որոշակի ռիսկեր, մենք պետք է դա հարգենք: Դա, ի վերջո, մեր պետության պաշտպանության հարցն է: Այլ խնդիր է, որ ես որպես պաշտոնյա և կարծում եմ մեր բոլոր գործընկերները Ազգային ժողովում, պիտի կարողանանք Ձեզ համար ստեղծենք ամենանպաստավոր պայմանները աշխատանքի համար, ինչի մասին ես արդեն լսել եմ, որ նորանշանակ Ազգային ժողովի նախագահը հիմա քննարկում է: Մենք էլ պատրաստ ենք՝ որպես գործադիր, որպես մասնագետներ, աջակցենք Ազգային ժողովի մեր գործընկերներին, որպեսզի լրագրողների համար ստանանք ամենահարմար աշխատանքային պայմանները»:

«(. . .) Եվ եթե կարող է լինել, որոշակի ազատ շարժի դեպքում, վարձկանների, որոնք կարող են նաև թաքնված լինել լրագրողի կերպարի տակ, եթե կարող են լինել այդպիսի վարձկաններ, ու նույնիսկ էդպիսիներից պետք է, նույնիսկ այդպիսիներից պետք է պաշտպանել, ուրեմն՝ ես գտնում եմ, որ պետք է մենք հավատանք անվտանգության մարմիններին³³»:

Հարցազրույցներից մեկի ընթացքում Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների վերաբերյալ լրագրողի հարցադրմանն ի պատասխան՝ նմանատիպ մեկնաբանություն է ներկայացրել նաև Ազգային ժողովի կառավարող խմբակցության պատգամավոր Սարգիս Խանդանյանը, որը, մասնավորապես, նշել է, որ «(. . .) Դուք ունեք գործընկերներ, որոնց ես մի քանի անգամ նաև հենց դեմքին ասել եմ, որ դուք լրագրող չեք, դուք լրագրությամբ զբաղվող անհատներ եք, որոնք ինձ մոտ մեկ-մեկ ահաբեկչի տպավորություն են ստեղծում, և ինձ թվում է էդ գոտին քանդելու են և պայթի շենքը, էնպիսի ագրեսիվությամբ են հարձակվում պատգամավորների կամ պաշտոնյաների վրա, որ իսկապես էդ ահաբեկչի տպավորություն են ստեղծում³⁴»:

³³ <https://newsarmenia.am/am/news/armenia/Inchu-eg-mez-terroristi-het-hamematum-/>

³⁴ <https://www.youtube.com/watch?v=mpR8TzLav9w>

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է ընդգծել, որ պետական պաշտոն զբաղեցնող անձինք ներկայացված բովանդակությամբ մեկնաբանություններ անելու միջոցով նպաստում են լրագրողների մասնագիտական գործունեության նկատմամբ հասարակությունում համակարգային սխալ ընկալման ձևավորմանը: Նման մեկնաբանությունները նպաստում են հասարակությունում լրագրողի դերի հեղինակագրկմանը, նրա գործունեության բնույթի, նպատակի ոչ ճիշտ ընկալմանը, ինչպես նաև դրա կարևորության արժեզրկմանը, որը, միանշանակ, անթույլատրելի է:

Կարևոր է, որ պետական պաշտոն զբաղեցնող անձինք հատուկ ուշադրությամբ ընտրեն իրենց կողմից օգտագործվող յուրաքանչյուր բառ և ձևակերպում, քանի որ նրանց խոսքն ուղղակի ազդեցություն է ունենում որոշակի երևույթների նկատմամբ հանրային ընկալման, հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Պետք է հաշվի առնել, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց խոսքը կարող է հասարակության շրջանում լրագրողների գործունեության վերաբերյալ սխալ ընկալումների, կարծրափայերի ձևավորման կամ դրանց խորացման պատճառ դառնալ:

Ավելին՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց խոսքը կարող է ոչ միայն հասարակությունում լրագրողների գործունեության վերաբերյալ սխալ ընկալումների, կարծրափայերի ձևավորման կամ դրանց խորացման պատճառ դառնալ, այլ նաև լուրջ ազդեցություն ունենալ կոնկրետ մարմինների կողմից լրագրողների և նրանց գործունեության նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի վրա:

Հարկապես անընդունելի է, երբ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների մասին խոսելիս համեմատություններ են փարվում, օրինակ, ծանր հանցանքներ կատարած անձանց հետ՝ դրանով առավել նպաստելով հասարակության շրջանում, ինչպես նաև կոնկրետ մարմինների մոտ որոշակի կարծրափայերի ձևավորմանը կամ խորացմանը:

Առավել ևս, անհրաժեշտ է նկատի ունենալ ներկայում Հայաստանի սահմաններին վերաբերող անվտանգային խնդիրները և դրանց պայմաններում լրագրողական աշխատանքի առանձնահատուկ կարևորությունը: Նշվածի հաշվառմամբ ևս՝

պետական պաշտոն զբաղեցնող անձինք իրենց խոսքով պետք է նպաստեն հասարակության շրջանում լրագրողների գործունեության նկատմամբ բարձր վստահության ձևավորմանը և լրագրողների հեղինակության բարձրացմանը: Սա հատկապես կարևոր է ստեղծված իրավիճակում լրագրողների աշխատանքի, նրանց կողմից ներկայացվող տեղեկատվության նկատմամբ հանրային վստահություն ձևավորելու տեսանկյունից:

Ազգային ժողովի անվտանգության ապահովումն ունի հիմնարար կարևորություն, բայց լրագրողների աշխատանքի սահմանափակումները չպետք է «թաքցվեն» անվտանգության կանոնների հետևում: Ուստի, անընդունելի են Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքի սահմանափակումների հիմքում, օրինակ, ահաբեկչական ակտերի կամ այլ ծանր հանցանքների կանխման հիմնավորումներ դնելը:

Պետական իրավասու մարմինները, այդ թվում՝ Ազգային ժողովը, պարտավոր են առաջնորդվել լրագրողի օրինավորության, բարեխղճության ու ազնվության կանխավարկածով:

Լրագրողների մասնագիտական ազատ աշխատանքը երկրում ժողովրդավարության հիմքերից մեկի՝ խոսքի ազատության գրավական է: Այն պետության մարմինների և պաշտոնյաների նկատմամբ քաղաքացիների վերահսկողության երաշխիք է:

Լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի աշխատանքի շնորհիվ է, որ հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ հնարավորություն է ստանում հետևելու հանրային գործառույթի իրականացմանը կոնկրետ մարմնի կողմից³⁵:

Պետական մարմնի կամ պաշտոնյայի աշխատանքի մասին տեղեկություն ստանալը մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունք է, որը գլխավորապես ապահովվում է հենց լրագրողի աշխատանքով:

³⁵ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ «Իրավական չափանիշներ քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքի իրավունքի և այդ կապակցությամբ պետական իրավասու մարմնի պարտականության վերաբերյալ» ուղեցույց, 2018թ., էջ 3, հասանելի է https://www.ombuds.am/images/files/986e87edd62975d1dd1a8a035d509f19.pdf?fbclid=IwAR0bXxtC5y37RebGpMODyGMrQVn_vREYOf6_cDFYFYBCZPz0zPauO3D-hsw հղմամբ:

Այս առումով ուշադրության են արժանի Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների կողմից Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներն ու ահազանգերն այն մասին, որ առանձին պատգամավորներ հրաժարվում են հարցազրույցներ տալ կամ մեկնաբանություններ անել՝ թույլ տալով լրագրողին ուղղված ցուցադրական վիրավորական ձևակերպումներ, հատկապես՝ երբ հստակ տեղյակ են, թե լրագրողը որ լրատվամիջոցն է ներկայացնում, բայց ցուցադրաբար առանձին կամ այլ լրագրողների ներկայությամբ հատուկ հարցնում են դա լրագրողից՝ հստակ իմանալով, որ այդ կերպ առավել թիրախավորում են լրագրողին և նպաստում սոցիալական մեղիայում այդ լրագրողի կամ լրատվամիջոցի նկատմամբ վիրավորանքի ու ատելության խոսքի գեներացմանը:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ յուրաքանչյուր պետական մարմին կամ պաշտոնատար անձ պետք է գիտակցի, որ լրագրողի անխոչընդոտ աշխատանքի ապահովումը, լրագրողին հարցազրույց կամ մեկնաբանություն տալն իր պարտավորությունն է: Ազգային ժողովի պատգամավորների դեպքում խոսքը նաև քաղաքացիների նկատմամբ պարտավորության մասին է:

Բացի այդ, չի կարելի Ազգային ժողովում լրագրողների աշխատանքը համեմատել Կառավարության կամ գործադիր իշխանության այլ մարմնի շենքում լրագրողների աշխատանքի հետ և ըստ այդմ նախատեսել լրագրողի աշխատանքի կանոններ, այդ թվում՝ սահմանափակումներ:

Ազգային ժողովի պարագայում խոսքը գնում է քաղաքացիների ուղիղ քվեով ընտրված պատգամավորների մասին: Խորհրդարանի շենքում են բախվում կարծիքներ, ձևավորվում է հանրային դիսկուրս և բանավեճ: Խորհրդարանն է երկրի ժողովրդավարության համակարգի գլխավոր երաշխավորը:

Եվս մեկ անգամ արձանագրում ենք, որ Ազգային ժողովում աշխատում են սահմանված ընթացակարգով հավատարմագրված լրագրողներ, որոնք Ազգային ժողով մուտք գործելիս արդեն իսկ ենթարկվում են ստուգման անվտանգությունն ապահովող ծառայության կողմից, այդ թվում՝ համապատասխան սարքերով, և

անվտանգության ապահովման հիմքով նրանց նկատմամբ լրացուցիչ սահմանափակումների կիրառումն անընդունելի է:

Վերոնշյալ փաստն առանձնահատուկ ընդգծել են նաև Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված իրենց բանավոր և գրավոր բողոքներով, ահազանգերով:

2021 թվականի օգոստոսի 2-ից Ազգային ժողովի շենքում լրագրողների գործունեության նկատմամբ կիրառվող սահմանափակումներն ակնհայտ վկայում են, որ դրանք Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում անվտանգության ապահովման հետ առնչություն չունեն, այլ պարզապես անհիմն սահմանափակում են լրագրողների աշխատանքը՝ խոչընդոտներ առաջացնելով նրանց մասնագիտական գործունեության համար, ինչպես նաև բացասական ազդելով հասարակությունում լրագրության հեղինակության վրա:

Լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները պետք է բխեն բացառապես Ազգային ժողովի աշխատանքների բնականոն կազմակերպման պահանջից, սակայն դրանք չպետք է հանգեցնեն լրագրողների աշխատանքի խոչընդոտների կամ նրանց իրավունքների անհիմն սահմանափակման:

Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների գործունեության հետ կապված կարգավորումները պետք է նախատեսվեն ոչ թե Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոններով, այլ պետք է ստանան առանձին և հստակ կարգավորում օրենսդրական մակարդակում՝ դրանք դիտարկելով Ազգային ժողովում լրագրողի բնականոն գործունեությունն ապահովելու տեսանկյունից:

Մասնավորապես, **անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում սահմանել կարգավորումներ, որոնցով կամ որոնց հիման վրա կամրագրվեն Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, լրագրողների վարքագծի կանոնները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ պատգամավորների ու այլ պաշտոնատար անձանց պարտականությունները:**

Ընդ որում, նշվածն անհրաժեշտ է ամրագրել պատշաճ իրավական ակտով, իրավական որոշակիության և համաչափության սահմանադրական պահանջներին համապատասխան, և նախքան Ազգային ժողովի նստավայրի տարածքում կամ շենքում լրագրողների ազատ աշխատանքը սահմանափակող որևէ փոփոխություն ընդունելն այն նախապես պարտադիր քննարկել Ազգային ժողովում աշխատող հավատարմագրված լրագրողների հետ: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև լրագրողական ոլորտի կազմակերպությունների և մասնագետների դիրքորոշումները:

**Գլուխ 6. Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայության
աշխատակիցների անթույլատրելի արարքները լրագրողների նկատմամբ և
լրագրողների նկատմամբ ներգործության անհրավաչափությունն անորոշ
կարգավորումների պայմաններում**

Ինչպես արդեն նշվել է՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված հիմնարար բնույթի հարցերով բողոքները և ահազանգերը հիմնականում վերաբերել են Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների՝ Ազգային ժողովում ազատ տեղաշարժի և մասնագիտական գործունեության իրականացման խոչընդոտներին:

Այս համատեքստում հատուկ ուշադրության են արժանի Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով ներկայացված՝ Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցների անթույլատրելի վարքագիծն ու արարքները լրագրողների նկատմամբ, այդ թվում՝ ապօրինի սպառնալիքների ներքո լրագրողներին ապօրինի պահանջներ ներկայացնելը:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ու ահազանգերի համաձայն՝ 2021 թվականի օգոստոսի 2-ից սկսած՝ Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցները լրագրողներին և օպերատորներին արգելում են մուտք գործել Ազգային ժողովի նոր մասնաշենք, ինչպես նաև մոտենալ խմբակցությունների և պատգամավորների աշխատասենյակներին, հարցազրույցներ և մեկնաբանություններ վերցնել միջանցքներում, ինչպես նաև դրանց նախասրահներից:

Լրագրողներն իրենց բողոքներով և ահազանգերով Մարդու իրավունքների պաշտպանին հայտնել են, որ անվտանգության ծառայության աշխատակիցները խոչընդոտում են Ազգային ժողովի միջանցքներում պատգամավորներին մոտեցած լրագրողների մասնագիտական գործունեությունը, այդ թվում՝ չեն թույլատրում լրագրողին մուտք գործել պատգամավորի աշխատասենյակ, լրագրողների վկայությամբ, անգամ այն դեպքում, երբ պատգամավորն անձամբ հրավիրում է լրագրողին իր աշխատասենյակ:

Մի շարք հավատարմագրված լրագրողների կողմից Պաշտպանին հասցեագրված բողոքներն ու ահազանգերը վերաբերել են նաև նրան, որ լրագրողի և պատգամավորի խոսակցության ընթացքում լարված մթնոլորտ առաջանալու պարագայում լինում են դեպքեր, երբ անվտանգության ծառայության աշխատակիցներն անմիջապես մոտենում են նրանց և կանգնում լրագրողի ու պատգամավորի միջև՝ դրանով ևս խոչընդոտելով լրագրողի մասնագիտական աշխատանքի պատշաճ իրականացմանը:

Հարկ է նշել, որ «Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշման 1-ին կետի համաձայն՝ *Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստավայրի փարածքում եւ շենքում գործող անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՆՈ-01-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի³⁶ 1.4-րդ կետում նշված «եւ արտաքին վերահսկելի գոտիներ.» բառերը փոխարինվել են «, արտաքին վերահսկելի եւ աշխատանքային գոտիներ.» բառերով:*

Ազգային ժողովում առկա է հատուկ վերահսկելի գոտի, որտեղ արգելվում է Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներին զբաղվել մասնագիտական գործունեությամբ:

Որոշման 2-րդ կետի համաձայն՝ *Հավելված 1-ի՝ հատուկ վերահսկելի գոտուն վերաբերող 1.4-րդ կետի 2-րդ ենթակետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝ «Հատուկ վերահսկելի գոտին ներառում է Ազգային ժողովի նիստերի դահլիճը, Ազգային ժողովի նախագահի աշխատասենյակը, Ազգային ժողովի նախագահի ընդհունարանը, Ազգային ժողովի նախագահի որոշմամբ՝ **նաեւ այլ դահլիճներ**, որտեղ մուտքը թույլատրվում է համապատասխան սարքերով պարտադիր զննում անցնելուց հետո: Առանց համապատասխան զննման մուտքը հատուկ վերահսկելի գոտի թույլատրվում է միայն Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Ազգային ժողովի գլխավոր քարտուղար) թույլտվությամբ եւ պահպանության ծառայության պետի համաձայնությամբ:»:*

³⁶ Այսուհետ՝ Հավելված 1:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ որևէ ակտով սահմանված չէ, թե ի՞նչ է ենթադրում «այլ դահլիճներ» եզրույթը, հետևաբար առկա չէ սպառիչ տեղեկություն, թե կոնկրետ ո՞ր վայրերում է արգելվում կամ Ազգային ժողովի նախագահի որոշմամբ կարող է արգելվել լրագրողների աշխատանքը:

Այս առումով ուշագրավ է, որ Հավելված 1-ի 1.4-րդ կետի 2-րդ ենթակետի ամրագրումն, ըստ էության, ուղղված է եղել իրավական որոշակիությունից զուրկ դրույթների վերաբերյալ որոշակի հստակեցումներ տալուն, սակայն դրանով կրկին ամրագրվել է իրավական որոշակիությունից զուրկ «նաև այլ դահլիճներ» ձևակերպումը: Նշված ձևակերպումը հնարավորություն է ընձեռում Ազգային ժողովին կամայական կերպով խոչընդոտելու հավատարմագրված լրագրողների մասնագիտական գործունեությանը՝ ըստ անհրաժեշտության «նաև այլ դահլիճներ» ձևակերպման ներքո ներառելով ցանկացած դահլիճ, որտեղ տվյալ պահին ցանկալի չի լինի լրագրողների ներկայությունն ու նրանց կողմից մասնագիտական աշխատանքի իրականացումը:

Որոշման 3-րդ կետի համաձայն՝ Հավելված 1-ի 1.4-րդ կետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով՝ «4) աշխատանքային գոտի է համարվում Ազգային ժողովի աշխատակազմի ծառայողների, Ազգային ժողովի խմբակցությունների աշխատասենյակների տարածքը, որտեղ մուտքը (ելքը) սահմանափակ է: Աշխատանքային գոտում գործող կարգապահական կանոնները հաստատում է Ազգային ժողովի նախագահը:»:

Որոշման 4-րդ կետի համաձայն՝ Հավելված 1-ի 1.5-րդ կետի «իսկ արտաքին վերահսկելի գոտում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական լիազոր մարմինը» բառերը փոխարինվել են «արտաքին վերահսկելի գոտում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական լիազոր մարմինը, իսկ աշխատանքային գոտում՝ Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան աշխատակից(ներ)ը:» բառերով:

Որոշման 5-րդ կետի համաձայն՝ Հավելված 1-ի 1.6-րդ կետը շարադրվել է հետևյալ նոր խմբագրությամբ՝ «1.6. Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներն իրենց

մասնագիտական գործունեությունն իրականացնում են Ազգային ժողովի նստավայրում **առանձնացված հատուկ տեղերում**, իսկ առանձնացված հատուկ տեղերից բացի **այլ տեղերում** կարող են մասնագիտական գործունեություն իրականացնել միայն Ազգային ժողովի գլխավոր քարտուղարի թույլտվությամբ:

Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները հանձնաժողովի նիստին կարող են ներկա լինել հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, իսկ նիստի ընթացքում իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են **իրենց համար առանձնացված տեղում**: Հանձնաժողովի նախագահը հավատարմագրված լրագրողների ցուցակը, ովքեր ներկա են գտնվելու նիստին, նախապես, բայց ոչ ուշ քան նիստն սկսելուց 2 ժամ առաջ, ներկայացնում է Ազգային ժողովի գլխավոր քարտուղարին:

Պահպանվող օբյեկտի հատուկ վերահսկելի գոտիներում արգելվում է Ազգային ժողովում հավատարմագրված լրատվական միջոցներին զբաղվել մասնագիտական գործունեությամբ:»:

Այս առումով կարևոր է արձանագրել, որ լրագրողի աշխատանքը, օրինակ, ԱԺ շենքի միջանցքներում կամ նախասրահներում ինքնանպատակ չէ: **Լրագրողը չպետք է զրկվի «առաջին ձեռքից» կամ «տաք» տեղեկություններ ստանալու, այդ թվում՝ տեղում պատգամավորներին հարցեր ուղղելու, հարցազրույց վարելու կամ մեկնաբանություն ստանալու իրավունքից**: Այս կանոնն ուղղակիորեն բխում է միջազգային իրավաբանությունից³⁷:

Չի կարող ընդունելի լինել այն հիմնավորումը, թե միևնույն է՝ լրագրողն ազատորեն կարող է, օրինակ, պատգամավորի հետ պայմանավորվել և հարցազրույց վարել Ազգային ժողովի բակում: Այդ կերպ լրագրողը զրկվում է իր իրավունքներից, իսկ սահմանափակումը վերածվում է խոչընդոտի:

Լրագրողը պետք է հնարավորություն ունենա, կոնկրետ պահին առաջ եկած տեղեկատվական առիթն օգտագործելով, տեղեկություններ հրապարակել, այդ թվում՝

³⁷ Տե՛ս, օրինակ, Մանդլին և այլոք ընդդեմ Հունգարիայի (Mándli and others v. Hungary) գործով 2020 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 63164/16:

հաշվի առնելով, որ լրագրողը չպետք է կորցնի սենսացիոն, էքսկլյուզիվ տեղեկություններ հրապարակելու հնարավորությունը:

Որոշման 10-րդ կետի համաձայն՝ *Հավելված 1-ի 2-րդ գլուխը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 2.8-րդ կետով՝ «2.8. Պահպանվող օբյեկտի տարածքում, այդ թվում՝ հսկիչ անցագրային կետերում, արգելվում է ձայնագրել, տեսա- կամ լուսանկարահանել պահպանության ծառայության աշխատակիցներին՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս:»:*

Այս առումով հարկ է հատուկ ընդգծել, որ մինչ ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշումը ՀՀ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոններով նման արգելք նախատեսված չի եղել:

Որոշման 67-րդ կետի համաձայն՝ *Հավելված 1-ի 6.17-րդ կետում նշված «,բացի Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներից,» բառերը եւ կեդրոնական նշանները հանվել են:*

Մասնավորապես, մինչ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ կատարված փոփոխությունները, Հավելված 1-ի 6.17-րդ կետը շարադրված էր հետևյալ խմբագրությամբ. «Ազգային ժողովի դռնբաց նիստերի ժամանակ, **բացի Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներից,** նիստերի դահլիճի օթյակներում գտնվելու իրավունք ունեն Ազգային ժողովի գլխավոր քարտուղարի տված ցուցակով ներկայացված անձինք»:

Այսինքն՝ Ազգային ժողովի դռնբաց նիստերի ժամանակ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներն առանց որևէ սահմանափակման իրավունք ունեին գտնվել նիստերի դահլիճի օթյակներում, որն իրավաչափ է, քանի որ, Ազգային ժողովի օթյակներն ի սկզբանե կառուցվել են հենց լրագրողների համար, դրանք դռնբաց նիստերի ժամանակ այդ նիստերը լուսաբանելու նպատակով Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների մասնագիտական գործունեության հիմնական վայրն են:

Մինչդեռ, կատարված փոփոխություններով նախատեսվել է հավատարմագրված լրագրողների մասնագիտական աշխատանքի հերթական սահմանափակումը, որով

նրանք գրկվել են դռնբաց նիստերի ժամանակ Ազգային ժողովի նիստերի դահլիճի օթյակներում անխոչընդոտ ներկա գտնվելու հնարավորությունից, փոխարենը, այդ հնարավորությունը նրանց ընձեռելու հայեցողությունը վերապահվել է Ազգային ժողովի գլխավոր քարտուղարին: Այսինքն՝ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները ևս դռնբաց նիստերի ժամանակ նիստերի դահլիճի օթյակներում գտնվելու իրավունք ունեն միայն այն դեպքում, եթե ներկայացված են Ազգային ժողովի գլխավոր քարտուղարի փված ցուցակով:

Ավելին, նշված գործընթացը որևէ կերպ կարգավորված չէ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով, այն ամրագրվել է «Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ: **Այսինքն, խնդրահարույց է ոչ միայն ինքնին սահմանափակումը, այլ նաև դրա ամրագրումն Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների ներքո:**

Այս առումով հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների և ահազանգերի համաձայն՝ Ազգային ժողովի նիստերի դահլիճի օթյակ լրագրողների մուտք գործելու և նրանց այնտեղ գտնվելու կապակցությամբ անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ցուցաբերվում է կամայական մոտեցում: Մասնավորապես, լրագրողների մուտքն Ազգային ժողովի նիստերի դահլիճի օթյակ երբեմն կամայականորեն խոչընդոտվում է անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից և վերջիններս չեն ներկայացնում հիմնավորումներ նման մոտեցման պատճառների վերաբերյալ:

Բացի այդ, Ազգային ժողովի նիստերի դահլիճում լարված մթնոլորտ կամ վիճաբանություն առաջանալու դեպքում անվտանգության ծառայության աշխատակիցներն անմիջապես մուտք են գործում նիստերի դահլիճի օթյակ և այնտեղից կոպիտ կերպով, քաշքշելով, բռնություն գործադրելով հեռացնում մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողներին՝ առանց պատճառաբանությունների: Ավելին, այդ ընթացքում լրագրողներին արգելվում է լուսանկարահանել և (կամ) տեսանկարահանել

անվտանգության ծառայության աշխատակիցներին, ինչպես նաև այն, ինչ տվյալ պահին տեղի է ունենում Ազգային ժողովի նիստերի դահլիճում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը տեղի ունեցած միջադեպերը քննարկել է Ազգային ժողովում մասնագիտական աշխատանք իրականացնող կոնկրետ լրագրողների հետ:

Լրագրողները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել են, որ անվտանգության ծառայողներն իրենց հայտնել են, որ կթույլատրեն օթյակում մասնագիտական աշխատանք կատարել, բայց նիստերի դահլիճում միջադեպերի դեպքում նրանք պետք է լքեն օթյակը և իրավունք չունեն միջադեպեր (նաև բռնություն) լուսաբանել, այդ թվում՝ նկարահանել: Լրագրողները տեղեկացրել են, որ իրենց համար նախատեսված վայրից՝ օթյակից, իրենց դուրս են հանում այն ժամանակ, երբ նկատում են, որ Ազգային ժողովի նիստերի դահլիճում իրավիճակը լարվում է կամ ինչ-որ իրարանցում է զարգանում:

Օրինակ՝ «Civilnet.am»-ի լրագրող Գևորգ Թոսունյանը նշել է, որ Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայության աշխատակիցներն իրենց սկսել են 2 օթյակներից հեռացնել այն ժամանակ, երբ նկատել են, որ Ազգային ժողովի նիստերի դահլիճում իրավիճակը լարվում է: Անվտանգության ծառայության աշխատակիցները կոպիտ կերպով հրելով դուրս են հանել լրագրողներին, իսկ երբ նկատել են, որ ինքը տեսանկարահանում է ընթացքը, ագրեսիվ վարքագծով սկսել են իրեն քաշքշել՝ պահանջելով չտեսանկարահանել և դուրս գալ օթյակից:

Մեկ այլ դեպքում «Factor.am»-ի լրագրող Մերի Մարտիրոսյանը տեղեկացրել է, որ անվտանգության ծառայության աշխատակիցներն իրենց դուրս են հանել հրելով ու քաշքշելով՝ չներկայացնելով հիմնավորումներ: Նույնը նշել է նաև «Hraparak.am»-ի լրագրող Վահե Մակարյանը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ուսումնասիրել է ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված տեսանյութերը³⁸:

³⁸ <https://www.youtube.com/watch?v=xj76oS02Qoc>, <https://www.youtube.com/watch?v=pazKxX3Z0QE>

Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների և խոչընդոտների վերաբերյալ Պաշտպանին նույնաբնույթ բողոքներ ու ահազանգեր են ներկայացրել նաև, օրինակ, ՀՀ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրող, «168 Ժամ» թերթի և «168.am» կայքի թղթակից Զվարթ Խաչատրյանը, ինչպես նաև «Գործընթաց» թերթի հիմնադիր տնօրեն Ինարա Դանիելյանը:

Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքներով ու ահազանգերով բարձրացրել են նաև այն հարցը, որ անվտանգության ծառայության աշխատակիցները հաճախ կոպիտ վերաբերմունք են ցուցաբերում իրենց նկատմամբ, այդ թվում՝ քաշքշում են, ձեռքից վերցնում են նրանց բջջային հեռախոսները, ներկայացնում են Ազգային ժողովի տարբեր հատվածներ չնկարահանելու պահանջներ, պահանջում են ջնջել նկարահանածը և այլն: Լրագրողներից մեկի պնդմամբ՝ անգամ եղել է դեպք, երբ անվտանգության աշխատակցի պահանջով ստիպված է եղել ջնջել իր ողջ լրագրողական նյութը, ինչ է, թե դրանում մի փոքր կադրով երևում է անվտանգության ծառայության աշխատակիցը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցները լրագրողների հանդեպ դրսևորում են կոպիտ վերաբերմունք:

Նրանք արգելելում են լրագրողներին մնալ լրագրողների համար նախատեսված սենյակում և որոշ լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության գործադրմամբ դուրս հանում այդ սենյակից: Օրինակ՝ տեսանյութերից մեկում զինվորական համազգեստով ծառայողը երկու կին լրագրողների ձեռքերից բռնելով նրանց դուրս է հանում լրագրողների սենյակից:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն, որ հավատարմագրված լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն Ազգային ժողովում իրականացնում են ռազմականացված, զինվորական համազգեստ կրող ծառայողների անմիջական վերահսկողության պայմաններում:

Այս կապակցությամբ հատուկ պետք է ընդգծել, որ ռազմականացված, զինվորական համազգեստ կրող ծառայողներն Ազգային ժողովի տարածքում գործնականում սկսել են ծառայություն իրականացնել լրագրողների գործունեության քննարկվող սահմանափակումների փաստացի կիրառմանը զուգընթաց: Ավելին՝ աստիճանաբար ուժեղացվել է Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների մասնագիտական գործունեության նկատմամբ այդ ծառայողների կողմից ուղղակի կամ անուղղակի միջամտությունը:

Այսպիսով՝ ստացվում է, որ ռազմականացված, զինվորական համազգեստ կրող ծառայողների՝ Ազգային ժողովում ներկայությունն իրականում միտված է հենց լրագրողների գործունեության սահմանափակումների կիրառման ապահովելուն:

Տեսանյութի մեկ այլ դրվագում հստակ երևում է, թե ինչպես են տվյալ ծառայողները մուտք գործում լրագրողների համար նախատեսված մեկ այլ սենյակ և անմիջապես սկսում արգելել նկարահանումներն՝ առանց որևէ կերպ կոնկրետ պահանջ ներկայացնելու կամ պարզաբանելու իրենց գործողության նպատակը, և առանց հնարավորություն տալու լրագրողներին հասկանալ պահանջն ու ինքնուրույն դուրս գալ սենյակից:

Նշվածի հիման վրա՝ հարկ է արձանագրել, որ ***անթույլատրելի է Ազգային ժողովի անվտանգությունն ապահովող ծառայության աշխատակիցների կողմից Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների մասնագիտական գործունեությանը, ներառյալ՝ այդ նպատակով Ազգային ժողովի նիստերի դահլիճի օթյակ նրանց մուտք գործելուն կամայականորեն խոչընդոտելը, ինչպես նաև արդեն իսկ օթյակում գտնվող և այնտեղից լուսանկարահանում, տեսանկարահանում իրականացնող լրագրողների մասնագիտական աշխատանքը դադարեցնելն ու նրանց օթյակից դուրս գալ պարտադրելը՝ առանց բավարար իրավական հիմքերի առկայության, ինչպես նաև նման մոտեցման պատճառների վերաբերյալ լրագրողներին իրազեկելու:***

Նշվածը չի բխում նաև «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքներ սահմանող դրույթներով ամրագրված պահանջներից, մասնավորապես, տվյալ օրենքի 4-

որ հողվածի 1-ին և 3-րդ մասերով, ինչպես նաև 6-րդ հողվածի 3-րդ և 7-րդ մասերով ամրագրված պահանջներից:

Ինչպես արդեն նշվել է՝ **Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով և ահազանգերով Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները բարձրացրել են նաև տեխնիկական բնույթի որոշ հարցեր, որոնք ևս բացասական են ազդում լրագրողների աշխատանքի վրա և պետք է դառնան քննարկման առարկա:** Մասնավորապես, լրագրողների բողոքների ու ահազանգերի համաձայն՝

1. Ազգային ժողովի նիստերի դահլիճի անմիջական հարևանությամբ լրագրողների համար նախատեսված հատվածում տեղադրված աթոռներին հիմնականում նստում են անվտանգության 9 աշխատակիցներ, որի հետևանքով ազատ է մնում միայն մի քանի աթոռ և լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս հաճախ չեն ունենում նստելու հնարավորություն:

2. Լրագրողների համար նախատեսված վերոնշյալ հատվածում մեծ թվով անվտանգության ծառայության աշխատակիցների մշտական ներկայության պատճառով խնդիրներ են առաջանում նաև լրագրողների մասնագիտական գործունեության գաղտնիությունն ապահովելու տեսանկյունից, քանի որ անվտանգության ծառայության աշխատակիցները, տվյալ տարածքի փոքր լինելու պատճառով, կարողանում են հետևել լրագրողների գործունեությանը, նրանց աշխատանքին, այդ թվում՝ նրան, թե ի՞նչ տեղեկություններ և նյութեր ունեն լրագրողներն իրենց համակարգիչներում: Խոսքն, իհարկե, առաջին հերթին վերաբերում է մասնագիտական խորհրդապահություն պարունակող նյութերին:

Վերոնշյալը վկայում է Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների մասնագիտական պարզաճ գործունեությանը խոչընդոտելու, դրան միջամտելու՝ անվտանգության ծառայության աշխատակիցների նպատակի մասին, քանի որ Ազգային ժողովի նիստերի դահլիճի կողքին առանձնացված հարվածը նախարեսված է հենց լրագրողների, նրանց կողմից իրենց առօրյա աշխատանքային գործունեությունը կազմակերպելու համար, հեղուկաբար, յուրաքանչյուր պարագայում, անընդունելի է այնպեղ անվտանգության ծառայության աշխատակիցների

ներկայությունը, ինչպես նաև ցանկացած բնույթի միջամտությունը լրագրողների մասնագիտական աշխատանքին:

Բացի այդ, Պաշտպանին հասցեագրված բողոքների ու ահազանգերի համաձայն, Ազգային ժողովի նիստերի դահլիճի անմիջական հարևանությամբ լրագրողների համար նախատեսված հատվածում առկա է միայն մի քանի վարդակ, որոնցից հիմնականում օգտվում են անվտանգության ծառայության աշխատակիցները՝ իրենց բջջային հեռախոսների մարտկոցները լիցքավորելու նպատակով: Նշվածի հետևանքով լրագրողները հաճախ չեն կարողանում լիցքավորել իրենց համակարգիչների մարտկոցները:

Սա ևս վկայում է այն մասին, որ Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցները խոչընդոտում են հավատարմագրված լրագրողների մասնագիտական պատշաճ գործունեության իրականացմանը: Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի այն, որ համակարգչով աշխատանքը լրագրողի առօրյա գործունեության բաղկացուցիչ մասն է և կարևոր նշանակություն ունի լրագրողի կողմից իր մասնագիտական աշխատանքն արդյունավետ իրականացնելու տեսանկյունից:

Այսպիսով՝ վերը ներկայացված՝ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների կողմից բարձրացված տեխնիկական բնույթի հարցերը փոխկապակցված և փոխապայմանավորված են հիմնարար բնույթի մյուս հարցերի հետ, հետևաբար պետք է դիտարկվեն հենց այդ համատեքստում: Դրանք բոլորն էլ բացասաբար են անդրադառնում Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների առօրյա մասնագիտական աշխատանքի անխոչընդոտ և պատշաճ իրականացման վրա:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով, ինչպես նաև 54-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավական կարգավորումներով գնահատողական և հայեցողական կիրառության տեղիք տվող ձևակերպումների անորոշությունը չի փարատվում նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ Ազգային ժողովից ստացված պարզաբանումների հաշվառմամբ:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի օգոստոսի 5-ին գրություն է հասցեագրել ՀՀ Ազգային ժողովի նախագահին, որին ի պատասխան՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահը 2021 թվականի օգոստոսի 12-ի գրությամբ պարզաբանումներ է ներկայացրել բարձրացված հարցերի վերաբերյալ:

ՀՀ Ազգային ժողովի նախագահը, վկայակոչելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, 54-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՆՈ-01-Լ որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 1.6-րդ կետը («Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշման հիման վրա շարադրված նոր խմբագրությամբ), նշել է, որ «(. . .) դեռևս 2017 թվականի մայիսի 18-ից գործող Կանոնակարգը հստակ ամրագրում է, որ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են իրենց համար առանձնացված հատուկ տեղում, որպիսի կարգավորումն ինքնանպատակ չէ: Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքը կազմակերպելիս մի կողմից պետք է ապահովել հավատարմագրված լրագրողների օրինական գործունեության իրականացումը, մյուս կողմից՝ պահպանվող օբյեկտիվ հանդիսացող Ազգային ժողովի տարածքում անվտանգությունը և Ազգային ժողովի աշխատանքների բնականոն ընթացքը»:

Այս առումով հարկ է արձանագրել, որ **Ազգային ժողովի նախագահի վերոնշյալ մեկնաբանությունը հերթական անգամ փաստում է, որ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների գործունեության սահմանափակումներն ընկալվում և դիտարկվում են որպես Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների բաղկացուցիչ մաս, որն անընդունելի է:**

Ավելին, **դեռևս 2017 թվականի մայիսի 18-ից գործող Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, 54-րդ հոդվածի 4-րդ մասը վկայակոչելիս և լրագրողների մասնագիտական**

գործունեության լրացուցիչ սահմանափակումներ նախատեսելու հիմքում դրանք դնելիս հաշվի չի առնվել այն, որ հենց տվյալ դրույթներով են սահմանված իրավական որոշակիությունից զուրկ, իրավակիրառ մարմնի կողմից կամայական մոտեցում ցուցաբերելու հնարավորություն և հիմք ստեղծող այնպիսի ձևակերպումներ, ինչպիսին են՝ «իրենց համար առանձնացված տեղում» և «առանձնացված հատուկ տեղում» ձևակերպումները:

Հենց Օրենքի նշված դրույթների առկայությունն էր, որ պետք է հիմք հանդիսանար, որպեսզի համապատասխան փոփոխությունների և (կամ) լրացումների միջոցով օրենսդրական մակարդակում ամրագրվեին այնպիսի առանձին կարգավորումներ, որոնցով կամ որոնց հիման վրա հստակ կերպով կսահմանվեին Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում հավատարմագրված լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, նրանց վարքագծի կանոնները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ պարզամավորների ու այլ պաշտոնատար անձանց պարտականությունները:

Մինչդեռ, փոխարենը, նշված դրույթների բովանդակությունը գրեթե նույնությամբ ամրագրվել է նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՆՈ-01-Լ որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 1.6-րդ կետում:

Ինչպես արդեն նշվել է՝ Հավելված 1-ի 1.6-րդ կետը ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշման հիման վրա շարադրվել է նոր խմբագրությամբ և լրացվել է ինչպես «առանձնացված հատուկ տեղերում» և «իրենց համար առանձնացված տեղում» ձևակերպումներով, այնպես էլ հերթական իրավական որոշակիությունից զուրկ, իրավակիրառ մարմնի կողմից կամայական մոտեցում ցուցաբերելու հնարավորություն և հիմք ստեղծող «այլ տեղերում» ձևակերպմամբ:

Նշվածը փոխկապակցված է ու համակարգային կապի մեջ է գտնվում նրա հետ, որ օրենսդրական մակարդակում սահմանված չեն առանձին, իրավական առումով որոշակի և հստակ կարգավորումներ Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական

գործունեության վերաբերյալ: Մասնավորապես՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, ամրագրված են Ազգային ժողովի նախագահի լիազորությունները, սակայն դրանցով վերջինիս վերապահված չէ որևէ լիազորություն՝ կապված Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, լրագրողների վարքագծի կանոնները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ պատգամավորների ու այլ պաշտոնատար անձանց պարտականությունները սահմանելու հետ:**

Վերոգրյալի հետևանքն է այն, որ Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական գործունեությանն առնչվող կարգավորումները, այդ թվում՝ սահմանափակումները, դիտարկվել և ներառվել են Ազգային ժողովի նախագահի որոշմամբ հաստատվող՝ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների ներքո, որն անընդունելի է:

Նշվածը փաստում է, որ հենց Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում առկա օրենսդրական բացը, ինչպես նաև Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով և 54-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ իրավական որոշակիությունից զուրկ ձևակերպումներն են հիմք հանդիսացել լրագրողների մասնագիտական գործունեության կամայական սահմանափակումների համար, և առաջնահերթ հենց այդ դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը պետք է դառնա քննարկման առարկա:

Ազգային ժողովի նախագահի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրությամբ ներկայացված՝ «(. . .) Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքը կազմակերպելիս մի կողմից պետք է ապահովել հավատարմագրված լրագրողների օրինական գործունեության իրականացումը, մյուս կողմից՝ պահպանվող օբյեկտիվ հանդիսացող Ազգային ժողովի տարածքում անվտանգությունը և Ազգային ժողովի աշխատանքների բնականոն ընթացքը», ինչպես նաև «(. . .) միջանցքներում և չնախատեսված վայրերում հարցազրույցներ ու մեկնաբանություններ վերցնելը խաթարում է ոչ միայն Ազգային ժողովի պարզամավորների, այն նաև Ազգային ժողովի աշխատակազմի աշխատողների

աշխատանքի բնականոն ընթացքը» ձևակերպումները գնահատողական են և հիմնված չեն կոնկրետ փաստերի վրա:

Այլ կերպ ասած, **Ազգային ժողովը չի կարողացել պատշաճ և համոզիչ փաստերով հիմնավորել և կոնկրետ օրինակներով ցույց տալ, որ հավատարմագրված լրագրողների գործունեությունը խոչընդոտներ է առաջացնում պահպանվող օբյեկտիվ հանդիսացող Ազգային ժողովի փարածքում անվտանգության, Ազգային ժողովի աշխատանքների բնականոն ընթացքի ապահովման համար: Ազգային ժողովը չի կարողացել նաև պատշաճ և համոզիչ կերպով հիմնավորել և ցույց տալ, որ միջանցքներում և չնախատեսված վայրերում հարցազրույցներ ու մեկնաբանություններ վերցնելը խաթարում է Ազգային ժողովի պարզամավորների և Ազգային ժողովի աշխատակազմի աշխատողների աշխատանքի բնականոն ընթացքը:**

Այս առումով հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ արտահայտվելու ազատությունը ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի³⁹: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց համարվելու համար միջամտությունը պետք է «բավականաչափ» հիմնավորված լինի, ինչը պարզելու համար հարկավոր է հաշվի առնել տվյալ գործով հանրությանը հուզող յուրաքանչյուր հայեցակետ⁴⁰:

Ազգային ժողովի նախագահի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված գրությամբ, որպես միջազգային փորձ, մեջբերվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագում գործող հետևյալ կանոնը՝ «խորհրդարանական աշխատանքի անխոռվ ընթացքը միշտ ունի առաջնահերթություն: Տեսա- և լուսանկարահանումներ, ձայնագրատումներ կատարելը պետք է կազմակերպել և իրականացնել այդ սկզբունքի համապատասխան»:

³⁹ Տե՛ս Տորգեիր Տորգեիրսոնն ընդդեմ Իսլանդիայի (Thorgeir Thorgeirson v. Iceland) գործով վճիռը, գանգատ թիվ 13778/88, կետ 63:

⁴⁰ Տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday Times v. The United Kingdom) գործով 1979 ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 65:

Այս առումով հարկ է նշել, որ **Ազգային ժողովի աշխատանքների բնականոն ընթացքի ապահովումը, միանշանակ, էական կարևորություն ունեցող հարց է, սակայն այդ նպատակով սահմանափակումներ նախատեսելիս, նախ, անհրաժեշտ է պարզաճ հիմնավորումներ ներկայացնել նման սահմանափակումների անհրաժեշտության, ինչպես նաև դրանց՝ հետապնդվող նպատակին համաչափության վերաբերյալ:**

Այսինքն՝ սահմանափակումները չեն կարող լինեն ինքնանպատակ և կամայական, հատկապես՝ սրեղծված իրավիճակում, երբ խոսքը վերաբերում է Ազգային ժողովում սահմանված կարգով հավատարմագրված լրագրողների իրավունքներին, նրանց առօրյա աշխատանքային գործունեությանը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագում գործող՝ մեջբերված կանոնը, որը վերաբերում է տեսա- և լուսանկարահանումներ, ձայնագրառումներ կատարելուն, ընդհանրական բնույթ ունի, իրավիճակային չէ, ինչպես նաև դրանով չեն վկայակոչվում կոնկրետ բնույթի սահմանափակումներ, հետևաբար վերաբերելի չէ քննարկվող իրավիճակում:

Ավելին, մեզ մոտ դեֆորմացված է հանցավորության դեմ պայքարի ընկալումը, որի հետևանքով հասարակության շրջանում ձևավորվում և առավել խորանում են լրագրողների գործունեության վերաբերյալ սխալ ընկալումներն ու կարծրատիպերը: Նշվածը բացասական ազդեցություն է ունենում նաև լրագրողի, նրա մասնագիտական գործունեության հեղինակության վրա:

Այս առումով պետք է հաշվի առնել նաև այն, որ նման մոտեցման հետևանքով հասարակությունում արդեն իսկ առկա են սխալ ընկալումներ լրագրողի դերի, լրագրողական գործունեության բնույթի և նպատակի վերաբերյալ, հետևաբար այս հարցի կապակցությամբ անհրաժեշտ է ցուցաբերել առավել զգուշավորություն:

Օրինակ՝ մեջբերված կանոնով որևէ կերպ նախատեսված չէ, որ Բունդեսթագում հավատարմագրված լրագրողներին արգելվում է տեսա- և լուսանկարահանել անվտանգության ծառայության աշխատակիցներին, մինչդեռ «Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի

որոշման 10-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՌ-01-Լ որոշման Հավելված 1-ի 2-րդ գլուխը լրացվել է նոր 2.8-րդ կետով, որի համաձայն՝ «2.8. Պահպանվող օբյեկտի տարածքում, այդ թվում՝ հսկիչ անցագրային կետերում, արգելվում է ձայնագրել, տեսա- կամ լուսանկարահանել պահպանության ծառայության աշխատակիցներին՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս:»:

Այսինքն՝ նախատեսվել է անվտանգության ծառայության աշխատակիցներին ձայնագրելու, տեսա- կամ լուսանկարահանելու ամբողջական արգելք՝ առանց նման սահմանափակման անհրաժեշտության պարզաճ հիմնավորման:

Ազգային ժողովի աշխատակազմի կողմից պետք է հստակ հիմնավորումներով՝ բարձր ստանդարտով ցույց տրվեր, թե ինչու չի կարելի տեսա- կամ լուսանկարահանել անվտանգությունն ապահովող աշխատակիցներին, և լրագրողը (առավել ևս ֆոտոլրագրողը կամ օպերատորը) ինչպես ապահովի, որ դա տեղի չունենա՝ հաշվի առնելով, որ անվտանգությունն ապահովող ծառայության աշխատակիցները տեղակայված են Ազգային ժողովի շենքի բոլոր միջանցքներում: Նշվածի հետևանքով ստացվում է, որ լրագրողների մասնագիտական աշխատանքն օբյեկտիվորեն հնարավոր չէ իրականացնել:

Հավատարմագրված լրագրողների անխոչընդոտ մասնագիտական գործունեության երաշխավորման նպատակով Ազգային ժողովում նրանց գործունեության սահմանափակումների, ինչպես նաև դրանց պայմաններում անխոչընդոտ գործունեություն ծավալելու եղանակների վերաբերյալ լրագրողներին պատշաճ իրազեկում և պարզաբանումներ ներկայացնելը կարևոր է հենց նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ գործող սահմանափակումների պայմաններում պարզ չէ, օրինակ, թե ինչպես պետք է հավատարմագրված լրագրողներն Ազգային ժողովում իրենց աշխատանքն իրականացնեն առանց անվտանգության ծառայության աշխատակիցներին տեսա- կամ լուսանկարահանելու, երբ նրանք ամենուր են:

Խնդրահարույց են նաև սահմանափակումներին չհետևելու արդյունքում լրագրողների համար առաջացող հետևանքները, պատասխանատվության

միջոցները, քանի որ գործնականում կիրառվող միջոցները չունեն որևէ իրավական հիմք, չեն ստացել օրենսդրական մակարդակով ամրագրում, ինչպես նաև կանխատեսելի չեն շահագրգիռ անձանց՝ լրագրողների համար:

Ազգային ժողովում անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից նման մոտեցման մասին են վկայում այն իրավիճակները, երբ վերջիններս արգելում են հավատարմագրված լրագրողների մուտքն Ազգային ժողով իրենց տեսական լուսանկարահանելու պատճառով:

Օրինակ՝ Ազգային ժողովում անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից նման մոտեցում է ցուցաբերվել «Panorama.am» լրատվական կայքի ֆոտոթղթակից, Ազգային ժողովում հավատարմագրված լրագրող Լիլիան Գալստյանի նկատմամբ, երբ 2021 թվականի օգոստոսի 5-ին արգելվել է վերջինիս մուտքն Ազգային ժողով:

Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է պաշտոնական կերպով հրապարակված՝ Ազգային ժողովի աշխատակազմից «Պանորամա ԷյԷմ» ՍՊԸ-ի տնօրեն Անդրանիկ Գրիգորյանին հասցեագրված գրության ուսումնասիրություն, որով նշվել է, որ «ՀՀ Ազգային ժողովի 7-րդ գումարման 6-րդ նստաշրջանում հավատարմագրված «ՊԱՆՈՐԱՄԱ ԷՅԷՄ» լրատվական կայքի լուսանկարիչ Լիլիան Գալստյանը օգոստոսի 4-ին 8-րդ գումարման 1-ին նստաշրջանի նիստերը լուսաբանելու ընթացքում խախտել է «ՀՀ Ազգային ժողովի նստավայրի փարածքում և շենքում գործող կանոնները հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշման հավելված 1-ի 2.8 կետը, ըստ որի՝ արգելվում է պահպանվող օբյեկտի փարածքում, այդ թվում հսկիչ անցագրային կետերում պահպանության ծառայության աշխատակիցներին իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս ձայնագրելը, փեսանկարահանելը կամ լուսանկարահանելը: Ելնելով վերոգրյալից՝ սույն թվականի օգոստոսի 5-ից 8-րդ հունարման 1-ին նստաշրջանի աշխատանքները լուսաբանելու նպատակով Լիլիան Գալստյանը չի կարող մուտք գործել Ազգային ժողով: Աժ 8-րդ գումարման 2-րդ նստաշրջանի աշխատանքը լուսաբանելու համար կարող եք հավատարմագրման հայր ներկայացնել ՀՀ Աժ աշխատակազմի համապատասխան հայտարարությունից հետո»:

Տվյալ գրության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ նման որոշում կայացրել է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալը:

Այս առումով հարկ է նշել, որ տվյալ գրությունը հատկապես խնդրահարույց է այն առումով, որ **Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողի նկատմամբ նման ներգործություն կիրառելու իրավական պատշաճ հիմքերը բացակայում են, գրությունը չի պարունակում կոնկրետ դեպքի կամ փաստերի հիմնավորումներ, իսկ այն ստորագրած պաշտոնյայի լիազորության իրավական տիտղոսը լուրջ կասկածի տեղիք է տալիս:**

Բացի այդ, անթույլատրելի է, որ Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցները հավատարմագրված լրագրողներին տեսա- կամ լուսանկարահանված նյութերը ջնջելու պահանջ են ներկայացնում: Հակառակ պարագայում սպառնում են, որ նրանք կգրկվեն հավատարմագրումից:

Անվտանգության ծառայության աշխատակիցները չունեն ինչպես նման պահանջ ներկայացնելու, այնպես էլ տվյալ պահանջին չենթարկվելու պարագայում լրագրողներին հավատարմագրումից զրկելու կամ նման սպառնալիք ներկայացնելու լիազորություն: Այսինքն՝ անվտանգության շառայության աշխատակիցները լրագրողներին ներկայացնում են ապօրինի պահանջ՝ ապօրինի սպառնալիքների ներքո:

Ազգային ժողովի նախագահը՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ **«Ըստ անհրաժեշտության, Ազգային ժողովի նախագահի համապատասխան որոշմամբ կսահմանվեն, թե որոնք են հանդիսանում հատուկ վերահսկելի գոտում ներառվող այլ դահլիճներ, իսկ այս պահին գործող կարգավորմանը համապատասխան՝ հատուկ վերահսկելի գոտին ներառում է ԱԺ նիստերի դահլիճը, ԱԺ նախագահի աշխատասենյակը, ԱԺ նախագահի ընդունարանը»:**

Նշվածը հերթական հաստատումն է այն փաստի, որ իրավական առումով ոչ որոշակի, ոչ հստակ ձևակերպումները պետական իրավասու մարմնին հնարավորություն են ընձեռում կամայական մոտեցում ցուցաբերել լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների նկատմամբ և դրանց

անդրադառնալ, ինչպես նշվել է, «ըստ անհրաժեշտության»: Նման մոտեցումն անթույլատրելի է և չի բխում իրավական որոշակիության սահմանադրական պահանջից:

Մյուս կողմից, լրագրողները պետք է ապահովվեն իրենց իրավունքների, մասնագիտական գործունեության սահմանափակումների վերաբերյալ պարզաճ տեղեկատվությամբ, որպեսզի գիտակցեն սահմանափակումների հստակ սահմանները, դրանց բնույթը, նպատակը, ինչպես նաև այդ սահմանափակումները չպահպանելու դեպքում նախատեսված իրավական հետևանքները, այլ ոչ թե փորձեն գուշակել դրանք:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Ազգային ժողովի նախագահը Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված գրությամբ մեջբերել է Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովում գործող հետևյալ կանոնները՝ որպես հավատարմագրված լրագրողներին վերաբերելի մասով Ազգային ժողովի տարածքում գործող կանոնների նույնաբնույթ կարգավորում.

«Լրագրողներն աշխատում են խորհրդարանի (palais Bourbon) տարբեր սրահներում և սենյակներում և տարբեր հարկերում: Առաջին հարկի «Empire» սենյակը նախատեսված է խորհրդարանական լրագրողների հանդիպումների և հարցազրույցների համար: Երկրորդ և երրորդ հարկերում տեղակայված են հեռախոսային կապերի և տեղեկատվության տրամադրման համար նախատեսված խմբագրության երկու սենյակներ: Այն լրագրողները, որոնք մշտապես աշխատում են Ազգային ժողովում, ունեն հատուկ առանձնացված գրասենյակներ: Բացի այդ, նախատեսված են նաև ռադիոյի տաղավարներ՝ նիստերի ուղիղ հեռարձակումը կամ հեռարձակման խմբագրված տարբերակը լրագրողներին հասանելի դարձնելու համար: Եվ վերջում, մամուլի ասուլիսի սենյակը հասանելի է նաև պատգամավորներին՝ իրենց խորհրդարանական աշխատանքները ներկայացնելու համար»:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ ներկայացված միջազգային փորձը վերաբերելի չէ քննարկվող իրավիճակին, ավելին, այն նույնաբնույթ չէ ՀՀ

Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողներին վերաբերելի մասով Ազգային ժողովի փարածքում գործող կանոնների հետ:

Մասնավորապես, Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովում գործող, վերը ներկայացված կարգավորումներով, համաձայն ներկայացված մեջբերման, նախատեսվել և պարզաբանվել է, թե ի՞նչ է ենթադրում «լրագրողներն աշխատում են խորհրդարանի (palais Bourbon) փարբեր սրահներում և սենյակներում և փարբեր հարկերում» նախադասությունը, որը փեղի չի ունեցել ՀՀ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների գործունեության սահմանափակումներ նախատեսող, ընդհանրական ձևակերպումներ ամրագրող դրույթների դեպքում:

Ավելին, վերոնշյալ միջազգային փորձը հերթական անգամ փաստում է, որ կարգավորումներում ընդհանրական ձևակերպումներ նախատեսելու պարագայում անհրաժեշտ է, որ դրանց անմիջապես հաջորդեն այդ մասին առավել մանրամասն և հստակ կարգավորումներ՝ բացառելու համար դրանց չարաշահումը, այդ առնչությամբ իրավակիրառ մարմնի կողմից կամայական մոտեցում ցուցաբերելը, ինչպես նաև հնարավոր փարընկալումները:

Բացի այդ, ցանկացած միջազգային փորձ մեջբերելիս կարևոր է այն հանգամանքի հաշվառումը, որ անհրաժեշտ է անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր կարգավորման էությանը և նպատակին: Կարգավորումները կարող են նույնաբնույթ որակվել միայն այն պարագայում, երբ դրանք բովանդակային և իրավիճակային առումով իրապես համապատասխանում են միմյանց:

Այսպիսով, ակնհայտ է, որ ՀՀ Ազգային ժողովից ստացված վերոնշյալ պարզաբանումները խիստ ընդհանրական են, սահմանափակված են իրավական նորմերին ֆորմալ հղումներով, քննարկող իրավիճակին ոչ վերաբերելի միջազգային փորձի վկայակոչմամբ, ինչպես նաև գնահատողական մոտեցումների տեղիք տվող ձևակերպումներով և մեջբերումներով:

Ներկայացված պարզաբանումները ոչ միայն չեն փարատում մտահոգությունները, այլև որոշակիորեն հաստատում են դրանք այն առումով, որ փաստորեն գործնականում, իրավական կանոններ կիրառելիս ՀՀ Ազգային ժողովում հաշվի չեն

առնվում ինչպես կարծիքի արտահայտման ազատության և մամուլի ազատության երաշխավորման առանձնահատկությունները, այնպես էլ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի և 54-րդ հոդվածի 4-րդ մասի հասկացությունների ընդհանրականությունը:

Մինչդեռ, վերոնշյալ դրույթներով նախատեսված սահմանափակումների ծավալի և շրջանակի հստակության ապահովումը, առավել ևս գնահատողական եզրույթների առկայության դեպքում դրանց կիրառության միասնականությունն առանցքային նշանակություն ունեն հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ խոսքը տվյալ դեպքում յուրաքանչյուր քաղաքացու կարծիքի արտահայտման ազատությանը, տեղեկություններ ստանալու իրավունքին է վերաբերում: **Ակնհայտ է, որ այդ սահմանափակումների բնույթը, ընդհանրական ձևակերպումներով արգելքները վճռականորեն առաջ են բերում առնվազն գործնականում դրանց մեկնաբանման և կիրառման հստակ չափանիշների խիստ անհրաժեշտություն:**

Նշվածից զատ, կարևոր է նաև նկատի ունենալ, որ նախատեսված սահմանափակումները, արգելքները, կարծիքի արտահայտման և մամուլի ազատությանը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու իրավունքին անհամաչափ միջամտություն լինելուց բացի, նաև այնպիսին չեն, որ բացառեն տեղեկատվական հոսքերը հատկապես սոցիալական մեդիայում:

Անհրաժեշտ է նշել, որ մի կողմից՝ համացանցում տեղեկատվության փոխանակման և տեղեկատվական հոսքերի մեծածավալությունն ու դրանք վերահսկելու անհնարինությունը, մյուս կողմից՝ հանրային հետաքրքրությունն ու հասարակական պահանջը՝ տեղեկացված լինելու երկրի Ազգային ժողովում տեղի ունեցող զարգացումներից, վկայում են, որ կարծիքի արտահայտման և մամուլի ազատության, ինչպես նաև տեղեկություններ ստանալու իրավունքի անհիմն սահմանափակումների միջոցով չէ, որ պետք է երաշխավորվել Ազգային ժողովի պատգամավորների և Ազգային ժողովի աշխատակազմի աշխատողների աշխատանքի բնականոն ընթացքը:

Ավելին, հավատարմագրված լրագրողները ևս մասնագիտական աշխատանք են իրականացնում Ազգային ժողովում, դա նաև նրանց աշխատավայրն է, հեղուկաբար ձեռնարկվող միջոցները պետք է ուղղված լինեն Ազգային ժողովում մասնագիտական

աշխատանք իրականացնող յուրաքանչյուր անձի աշխատանքի բնականոն ընթացքն ապահովելուն:

Բացի այդ, հատկապես Ազգային ժողովի պարագայում առկա է այնպեղ տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տեղեկացված լինելու հասարակական բարձր պահանջ և դա բավարարելու ճանապարհը հստակ սահմանված, կոնկրետ կանոնների պահպանմամբ մարդկանց՝ այդ տեղեկությունները ստանալու իրավունքի պարզաճ իրացումն ապահովելն է:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2018 թվականին հրապարակվել են «Իրավական չափանիշներ լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու հարցման և այդ առնչությամբ պետական մարմնի պարտականության վերաբերյալ⁴¹», ինչպես նաև «Իրավական չափանիշներ քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքի իրավունքի և այդ կապակցությամբ պետական իրավասու մարմնի պարտականության վերաբերյալ⁴²» վերտառությամբ ուղեցույցները, որոնցով անդրադարձ է կատարված լրագրողների մասնագիտական գործունեությանն առնչվող մի շարք հարցերի, այդ թվում՝ լրագրողի աշխատանքին և անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը, անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող ներպետական ու միջազգային իրավական կանոններին, տեղեկություններ ստանալու իրավունքին, ինչպես նաև այդ կապակցությամբ Պաշտպանի եզրահանգումներին ու իրավական չափանիշներին:

Մարդկանց՝ տեղեկություններ ստանալու իրավունքի անհիմն սահմանափակումները կարող են հանրային մարմինների նկատմամբ վստահության խնդիր առաջացնել, և մարդիկ, միևնույն է, կսկսեն այդ տեղեկությունները փնտրել այլ ճանապարհներով: Դա իր հերթին կնպաստի այլ՝ ոչ հավաստի և «զարտուղի» աղբյուրներից ստացվող տեղեկությունների լայնորեն տարածմանը՝ բացասական ազդեցություն ունենալով տեղեկատվական ոլորտի վրա:

⁴¹<https://www.ombuds.am/images/files/0b93e5799c7520fdc31d633d009a7073.pdf?fbclid=IwAR2HebAYYSY1QJQT EoCQRg7cfdnAixO5h3peXpnM3vMMsjFPlwmKO2XyZ-U>

⁴²<https://www.ombuds.am/images/files/986e87edd62975d1dd1a8a035d509f19.pdf?fbclid=IwAR0bXxtC5y37RebGp MODygMrQVn vREYOf6 cDFYFYBCZPz0zPauO3D-hsw>

Այսինքն, ստեղծված իրավիճակում տեղեկացված լինելու հասարակական պահանջը ենթադրում է, որ անհրաժեշտ է իրավական առումով որոշակի կարգավորումներ նախատեսելու միջոցով ապահովել լրագրողների պատշաճ աշխատանքը՝ մասնագիտական հստակ սկզբունքներին համապատասխան:

Վերոնշյալ հանգամանքները հերթական անգամ ակնհայտորեն փաստում են, որ խնդիրը պետք է դիտարկվի և քննարկման առարկա դառնա հենց սահմանադրականության հարթությունում:

Այսպես, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի և «Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշման ներկայացված դրույթների համակարգային կապի մեջ դիտարկումը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի համապատասխան դրույթների սահմանադրականության հարթությունում վիճարկումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, 54-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի հիման վրա, դրանով ղեկավարվելով ընդունված՝ «Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշման քննարկվող դրույթները չեն բավարարում իրավական որոշակիության, համաչափության, կարծիքի արտահայտման ազատության, տեղեկություններ ստանալու իրավունքի նկատմամբ միջամտության սահմանադրական պահանջներին, ինչպես նաև չեն համապատասխանում միջազգային պրակտիկային և մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին:

2. Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումներ նախատեսող, իրավական որոշակիությունից զուրկ ձևակերպումները սկզբնապես ամրագրվել են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով և 54-րդ հոդվածի 4-րդ մասով:

3. Այնուհետև, Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի հիման վրա, դրանով ղեկավարվելով՝ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՌ-01-Լ որոշման հավելված 1-ում և ամրագրվել են լրագրողների մասնագիտական գործունեության լրացուցիչ սահմանափակումներ:

4. Ազգային ժողովի նախագահի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրությամբ, որպես նախատեսված սահմանափակումների հիմք, վկայակոչվել են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, ինչպես նաև 54-րդ հոդվածի 4-րդ մասը:

5. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական գործունեությանն առնչվող հարցերը օրենսդրական մակարդակում չեն ստացել պատշաճ կարգավորում: Օրենսդրական մակարդակում սահմանված չեն առանձին, իրավական առումով որոշակի և հստակ կարգավորումներ, որոնցով կամ որոնց հիման վրա կամրագրվեն Ազգային ժողովի նստավայրի փարածքում և շենքում հավատարմագրված լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, լրագրողների վարքագծի կանոնները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ պարզամավորների ու այլ պաշտոնատար անձանց պարտականությունները: Մասնավորապես՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված են Ազգային ժողովի նախագահի լիազորությունները, սակայն դրանցով վերջինիս վերապահված չէ որևէ լիազորություն՝ կապված Ազգային ժողովի նստավայրի փարածքում և շենքում լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, լրագրողների վարքագծի կանոնները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ պարզամավորների ու այլ պաշտոնատար անձանց պարտականությունները սահմանելու հետ: **Նշվածի հետևանքն է այն, որ Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական գործունեությանն առնչվող կարգավորումները, այդ թվում՝ սահմանափակումները, դիտարկվել և ներառվել են Ազգային ժողովի նախագահի որոշմամբ հաստատվող՝ Ազգային ժողովի նստավայրի փարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների ներքո, որն անընդունելի է:**

6. Լրագրողները չեն ապահովվել իրենց իրավունքների, մասնագիտական գործունեության սահմանափակումների վերաբերյալ պատշաճ տեղեկատվությամբ, այդ թվում՝ սահմանափակումների հստակ սահմանների, դրանց բնույթի, նպատակի, ինչպես նաև այդ սահմանափակումներին չհետևելու դեպքում առաջացող իրավական հետևանքների վերաբերյալ: Հետևաբար, դրանք պատշաճ կերպով հասանելի և կանխատեսելի չեն դարձվել շահագրգիռ անձանց՝ լրագրողների համար: Հավատարմագրված լրագրողների նկատմամբ գործնականում կիրառվող հետևանքները, պատասխանատվության միջոցները չունեն որևէ իրավական հիմք, չեն ստացել օրենսդրական մակարդակով ամրագրում, ինչպես նաև կանխատեսելի չեն շահագրգիռ անձանց՝ լրագրողների համար:

7. Այսպիսով՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում առկա օրենսդրական բացը, ինչպես նաև Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով և 54-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ իրավական որոշակիությունից զուրկ ձևակերպումներն են հիմք հանդիսացել և հնարավորություն ստեղծել պետական իրավասու մարմնի համար, որպեսզի վերջինս լրագրողների մասնագիտական գործունեությանը վերաբերող կարգավորումների գործնականում կիրառությունն ապահովելիս ցուցաբերի կամայական մոտեցում և, ըստ նպատակահարմարության, անհիմն կերպով սահմանափակի լրագրողների իրավունքները: Հետևաբար՝ առաջնահերթ հենց Օրենքի տվյալ դրույթների՝ «Սահմանադրությանը համապատասխանությունը պետք է դառնա քննարկման առարկա:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի վկայակոչված դրույթների՝ կարծիքի արտահայտման ազատության, տեղեկություններ ստանալու իրավունքի երաշխավորման, իրավական որոշակիության և համաչափության, միջազգային պրակտիկային և մեր երկրի միջազգային պարտավորություններին համապատասխանության սահմանադրական պահանջներին համապատասխանությունը որոշելիս Օրենքի նշված դրույթները և Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ՝ Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում կատարված փոփոխությունները և լրացումները պետք է

դիտարկվեն դրանց օրգանական կապի, փոխապայմանավորվածության և փոխկապակցվածության տրամաբանությամբ:

Որպես կարևոր գործոն՝ Օրենքի քննարկվող դրույթների և դրանց կիրառության իրավաչափությունը դիտարկելիս պետք է հաշվի առնել նաև Մարդու իրավունքների պաշտպանին դիմած լրագրողների, լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչների այն մտահոգությունները, որ լրագրողների գործունեությանը վերաբերող սահմանափակումները օրենսդրական մակարդակով ձևակերպված են անորոշ և ոչ հստակ, որի հետևանքով հնարավորություն են ստեղծում իրավասու պետական մարմնի կողմից դրանց կիրառությունն ապահովելիս ցուցաբերել կամայական մոտեցում և անհիմն սահմանափակել լրագրողների իրավունքները:

Ստեղծված իրավիճակը համահունչ չէ նաև Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 8-ի ՍԴՈ-1291 որոշման մեջ իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ **հանրային իշխանության իրականացումը, նախևառաջ, սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով, որը հանդիսանում է իրավական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության, հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը:**

Համաչափության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության համատեքստում: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն նպատակին հասնելու համար:

Համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որ այս կամ այն հանգամանքներում վարչական մարմինը համարժեքություն ապահովի իր կողմից կիրառվող միջոցների ու դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև:

Համաչափության սկզբունքի կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել վարչական մարմինների միջամտող ակտերի կամ գործողությունների իրավաչափությունը՝

այդ միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ դրանց նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը:

Խնդրո առարկա կարգավորումներով ամրագրված սահմանափակումների համաչափությունն Ազգային ժողովում աշխատանքի բնականոն, անխոչընդոտ ընթացքը երաշխավորելու նպատակին գնահատելու համար հարկ է դիտարկել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում կիրառվող՝ խոսքի ազատության վրա խիստ զսպող ազդեցության (chilling effect) չափանիշը: Պետք է նկատի ունենալ, որ լրագրողները սկզբունքային դերակատարում ունեն ընդհանուր հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումը հասանելի և մատչելի դարձնելու հարցում: Այս համատեքստում նշված չափանիշը ենթադրում է, որ ***պեյրությունը պեյք է առավելագույնս զգոնություն ցուցաբերի և բացառի լրագրողների՝ վերոգրյալ դերակատարումը պատշաճ և լրիվ ծավալով կատարելուն որևէ կերպ անհարկի միջամտելը կամ խոչընդոտելը:***

Հաշվի առնելով սույն զեկույցով ներկայացված հիմնավորումները՝ կարևոր է արձանագրել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում առկա օրենսդրական բացը, ինչպես նաև 14-րդ հոդվածի 7-րդ մասով և 54-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ իրավական որոշակիությունից զուրկ ձևակերպումներն արդեն իսկ վկայում են դրանց հիման վրա Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների գործունեության նկատմամբ կիրառվող սահմանափակումների ոչ իրավաչափ զսպող ազդեցության մասին:

